Satenik Adamian



©1999 Alice Navasargian




Satenik as Norma Helmer in Ibsen's *A Doll's House* (both scenes)

Նորմայի դերում, «Տիկնիկների տունը», (երկու տեսարան)

©1999 Alice Navasargian


Satenik Adamian

©1999 Alice Navasargian

# Hasmik

# Յասմիկ

## 1879 - 1947

Hasmik, actress of stage and film, was born in Nakhijevan. She started her career in 1906 with the Tiflis Armenian Dramatic Stage Company, but her reputation as an astute drama theorist preceded her to the proscenium. She ranked with Sundoukian and Shirvanzadeh as exceptional authorities of the traditional Armenian stage.

Hasmik performed with various stage and theater groups in Tiflis before establishing the First State Theater in Yerevan in 1921, where she carried her unique traditional mastery to the Armenian theater.

She masterly performed the following roles: Kali in Sundoukian's *Kandats Ojagh*, Gegel in *Bebo*, Khampery in *Khatabala*, Shpanik in Shirvanzadeh's *Namous*, and Zarnishan in *Evil Spirit*. She also collaborated in the creation of new roles, most notably as Elmira in Moliere's *Tartuffe*, Madam S. in Ibsen's *Master Builder*, Elena in Hauptman's *Die Weaver's*, Volga as Dostoyevsky's *Idiot*, Kabanika in Ostrovsky's *Bankrupt*, Ludmila in *The Children of Vaynoosh*, Khanoom in Zakarelly's *Khanooma*, Clara in Afinogenov's *At the Breaking Point*.

She was a marvelous interpreter of Gorky. Her roles as Vasilia in *The Lower Depths*, *Vassa* Zheleznova in *Zheleznova*, and Melania in *Yegor Bulychov and Other's* gave witness to her creative genius. She was equally adept in other major roles, many still written about and studied.

Hasmik was a pioneer of the Armenian film industry. She starred in more than ten films during 1925-1944. The following movies hold a special place in the hearts of Armenians who remember Hasmik: *Namous*, *Gikor*, *Two Nights*, *Zangezur, and The Fisherman of the Sevan*. The artist posthumously received the high honor of Popular Artist of the Republic of Armenia in 1953.

ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1935։ Յասմիկը՝ Թագուհի Յակոբեանը, ծնուել է Նախիջեւանում։ 1904-ին Թիֆլիսի ժողովարանի թատերախմբում խաղացել է Քալի, Կեկէ՝ Սունդուկեանի «Քանդած օջախ», «Պէպօ» պիեսներում։

1906 թւականից հրաւիրուել է Թիֆլիսի հայկական դրամատիկական ընկերութեան թատերախումբ։ Նա դասւում է Սունդուկեանի եւ Շիրվանզադէի ստեղծագործութիւնների բեմական աւանդոյթները շարունակող դերասանների շարքը։ Նրա Խամփերին (Սունդուկեանի «Խաթաբալա»), Շպպանիկը, Զառնիշանը (Շիրվանզադէի «Նամուս», «Չար ոգի») մեծ համբաւ են բերել դերասանուհուն։ Կատարել է Էլմիրա (Մոլիերի «Տարտիւֆ»), Մադամ Շտոկման (Իբսէնի «Դոկտոր Շտոկման»), Էլենէ (Հաուպտմանի «Միքայէլ Կրամեր»), Ժակլին (Բիսոնի «Անյայտ կինը»), Մաղէն (Միրբոյի «Ժան Ռոկ»), Իվոլգինա («Ապուշը», ըստ Դոստոյեւսկու), Կաբանիխա (Օստրովսկու «Ամպրոպ»), Լիւդմիլա (Նայդէնովի «Վանիւշինի զաւակները»), Խանումա (Ցագարելիի «Խանումա»), Քրիստինէ (Ծերեթելիի «Քրիստինէ»)։

Յասմիկը 1921-ից հաստատւում է Երեւանի առաջին պետական թատրոնում։ Երեւանում նրա առաջին դերակատարումը Վիտիխէնն էր Հաուպտմանի «Ջրասոյզ զանգ»ում։ Նա իւրայատուկ վարպետութեամբ հանդէս է եկել ոչ միայն աւանդական յայտնի դերերով, այլեւ մարմնաւորել է նոր հերոսուհու բեմական կերպարներ. ինչպէս՝ Լիւբով Եարովայա (Տրենյեովի համանուն պիեսում), Աննա (Ռոմաշովի «Ռելսերը զրնգում են»), Կլարա (Աֆինոգենովի «Ահը»), Մարիա Լւովնա (Ռախմանովի «Պրոֆեսոր Պոլեժաեւ»)։

Նա Գորկու աւանդոյթների լաւագոյն ներկայացուցիչն էր հայ թատրոնում։ Նրա Վասիլիսան «Յատակում», Վասսա Ժելեզնովան «Վասսա Ժելեզնովա», Մելանիան «Եգոր Բուլըչով եւ ուրիշներ» ընդունուել են որպէս տարբեր բնաւորութիւններ կերտելու ստեղծագործական վարպետութեան ապացոյցներ։ Մայրական կերպարների մի ամբողջ շարք է ստեղծել հռչակաւոր դերասանուհին. վերջին դերը եւս այդպիսին էր՝ Աննա (Մ. Քոչարեանի «Հարազատ մարդիկ»ում)։

Յասմիկը միաժամանակ եղաւ նաեւ հայկական կինոարւեստի հիմնադիրներից մէկը՝ 1925-44 թթ. ընթացքում խաղաց տասից աւելի լիարժէք ու յուզիչ կինոդերեր՝ «Նամուս», «Չար ոգի», «Գիքոր», «Երկու գիշեր», «Պէպօ», «Զանգեզուր», «Սեւանի ձկնորսներ», եւ այլն, որոնցից իւրաքանչիւրը իր անգնահատելի տեղն ունի հայ կինոարւեստի ոսկէ գանձարանում։



©1999 Alice Navasargian

Hasmik



©1999 Alice Navasargian



Hasmik as the witch in Hamperdink's *Hansel and Gretel*
Գրետէլի դերում «Հէնզէլ Եւ Գրետէլ»



As Henrietta in Herman's *The Good Hope*
Հէնրիետայի դերում «Բարի յոյս»



As Shlomke in Gordin's *Mirelle Efros*
Շլոմկէի դերում «Միրէլ Էֆրոս»



As Vartouhi in Gevorkian's *Varazdad*
Վարդուհիի դերում «Վարազդատ»



©1999 Alice Navasargian



Hasmik as Ustian in Demirjian's *Kadj Nazar*. B. Mouradian as Nazar
Ուստիանի դերում Դեմիրճեանի «Քաջ Նազար»: Նազարի դերում Բ. Մուրադեան



As Shoushan in Sundoukian's *Bebo*
Շուշանի դերում «Պէպօ»



©1999 Alice Navasargian



Vittichen
Վիտիխենի դերում

As Mrs. Ksedias in Slavin's *Intermezzo*
Մադամ Քսեդիասի դերում «Ինտերմեցցո»



©1999 Alice Navasargian

Hasmik



©1999 Alice Navasargian

## Heghineh Adamian
## Հեղինէ Ադամեան
1881 - 1960

## Yevgineh Adamian
## Եւգինէ Ադամեան
1883 - 1945

Pianists Heghineh and Yevgineh Adamian were born in Baku to a wealthy family. Their father was one of the most successful businessmen in Baku. Their brother Hovhannes Adamian (1879-1932) was the inventor of the color television and the faxsimile machin. The other brother Arshag Adamian (1884-1956) was a proffessor and expert in arts and music. After primary school in Baku, they went to Geneva, and studied until 1904, then moved to Berlin. The sisters studied at Berlin's famous Stern Conservatory. Their professor was Martin Grauzey, the most distinguished teacher in that musically rich city.

In 1908, they graduated from the Stern Conservatory with highest honors and won the Gustav Holender Gold Medal. As duet pianists, they played in the major cities of Germany; Berlin, Munich, Bremen, Hanover, Vurdenberg, Stuttgart, and Dresden. Heghineh and Yevgineh quickly became favorites of every audience for which they performed.

Their itinerary expanded as their popularity grew. They gave concerts in Geneva, Vienna, Copenhagen, Rome, and St. Petersburg. Mostly, they did the masterpieces of Bach, Beethoven, Liszt, and Rachmaninoff.

Heghineh's husband was killed during the Armenian massacre of 1915. She moved to Berlin while Yevgineh settled in Paris.

Դաշնակահարուհի Հեղինէ եւ Եւգինէ Ադամեան քոյրերը ծնուել են Բաքւում, բարեկեցիկ, նշանաւոր ընտանիքում։ Հայրը Բաքւի յաջողած գործարարներից էր։ Հռչակաւոր դէմքեր էին եղբայրները՝ Յովհաննէս Ադամեանը (1879-1932) գունաւոր հեռուստատեսութեան, լուսահեռագրութեան գիւտարարն էր, Արշակ Ադամեանը՝ (1884-1956) գեղագէտ, երաժշտագէտ։ Նախնական կրթութիւնը Ադամեան քոյրերը ստանում են ծննդավայրում, ապա 1904-ին հայրը նրանց ուղարկում է Ժնեւ, որտեղ ուսանում են երաժշտական ակադեմիայում 1900-1904-ին, ապա՝ Բեռլինի «Շտեռն» նշանաւոր կոնսերւատորիայում, ժամանակի ականաւոր պրոֆ. Մարտին Կրաուզէի բարձր վարպետութեան դասարանում։ 1908-ին գերազանց աւարտելով կոնսերւատորիան պարգեւատրւում են «Գուստավ Հոլենդեր» ոսկէ մեդալով։ Որպէս դաշնամուրային զուգանւագ շրջագայել են Եւրոպայի գլխաւոր քաղաքներում, ջերմ ընդունելութիւն գտնելով եւ բարձր գնահատանքի արժանանալով ամենուր։ Հրաւիրուել են մենա-համերգների Սենտ Պետերբուրգ, Ժնեւ, Վիեննա, Պրագա, Կոպենհագէն, Հռոմ, Լոնդոն։ Կատարել են Բախի, Բեթհովէնի, Լիստի, Սէն Սանսի, Ռախմանինովի ստեղծագործութիւններից։ Ելոյթներ են ունեցել Գերմանիայի մի շարք քաղաքներում՝ Բեռլին, Միւնխեն, Բրեմէն, Հանովեր, Վիւրտենբուրգ, Շտուտգարտ, Դրեզդէն։ Կոմիտասը Անտոն Մայիլեանին ուղղած մի նամակում գրում էր. «Շատ ուրախալի է Ադամեան քոյրերի երեւան գալը, արդէն ես հետեւում եմ նոցա համերգների ընթացքին եւ հիանում նոցա փառաւոր յաղթանակով»։ 1915-ի հայկական կոտորածների ժամանակ զոհ է գնում Հեղինէի ամուսին Հայրանեանը։ Հեղինէն գաղթում է Գերմանիա, Բեռլին, որտեղ բնակւում է մինչեւ կեանքի վերջը։ Իսկ Եւգինէն ամուսնու՝ Գարագաշեանի հետ մեկնում է Փարիզ։ Քոյրերը այնուհետեւ երաժշտութիւն էին դասաւանդում։ Հեղինէն վախճանուեց Բեռլինում, Եւգինէն՝ Փարիզում։



©1999 Alice Navasargian






©1999 Alice Navasargian

# Olga Goulazian
# Օլգա Գուլազեան
1885 - 1970

Actress Olga Goulazian was born in Tiflis. Her artistic training followed the example set by Siranoush. She impressed audiences with her realistic and lively performances and with her unique expressiveness. Olga first performed in 1900 in the Armenian theater of Tiflis where she played the role of Nato in Gabriel Sundoukian's *One More Victim*. She earned the encouragement of Sundoukian and acclamation from the audience. As a professional actress she played in works by Mourashko, Araxian, Avjalian, and Zubalov's performances in Tiflis. Olga was one of the first actresses in the Gabriel Sundoukian Armenian State Theater, but her talent glowed most brightly in Sundoukian's plays, such as Natalia in *Khatabala* and as Gegel in *Bebo*. She performed in Tiflis, Constantinople, Trabizond, Moscow, Nor Nakhijevan, St. Petersburg, and Shushi. She played in Moliere's *The Imaginary Invalid*, Dorin in *Tartuf*, in Gordin's *The Other Side of the Ocean*, as Alioshka in Gorky's *The Lower Depths*, Gayaneh in Eugene Sumbadov's *Treachery*, and as Laura in Lope de Vega's *The Countryman in his Corner*. She also played roles in the following films produced by the Armenian Film Studio: Zareh, The Shadows are Leaving the Mountains and The First Song of Love. Olga won many state prizes and titles. In 1929, she was named "Accomplished Actress of the Republic of Armenia" and in 1935 "Popular Actress of the Armenian Republic". In 1952, she won the "State Medal of Armenia" and received the same honor in 1967. Olga caught the attention of theater-goers with an ability to popularize her best roles; Kunkushkina in Ostrovsky's *An Ardent Heart*, Ksenian in Gorky's *Yegor Bulychov and Others*, Horomsim in Papazian's *The Stone*, Lambrini in Parnis' *The Island of Aphrodite*, Esfir in Gutzkow's *Uriel Acosta*, The Great Lady in *Vartanuk*, Mother Brodie in Kronin's *Deacon Brodie*, and especially her Mrs. Balboa in *The Trees are Dying Standing*.

ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1935: Օլգա Գուլազեանը ծնուել է Թիֆլիսում: Բեմական իր արուեստով հետեւել է Սիրանոյշին: Դերասանուհին իրապաշտական կենսունակ իր արուեստով եւ արտայայտման բարձր մակարդակով հիացրել է հանդիսատեսին: Օլգա Գուլազեանը սկզբից բեմ է բարձրացել թատերասէրների ներկայացումներին: 1900 թւին Թիֆլիսի հայկական թատրոնում խաղացել է Նատոյի դերը՝ Գաբրիէլ Սունդուկեանի «Էլի մէկ զոհ»ում, արժանանալով թատերասէրների բարձր գնահատանքին ու հեղինակի խրախուսանքին: Մասնագիտական աշխատանքը սկսել է 1901-ին Թիֆլիսի հայկական թատրոնում: Հանդէս է եկել Մուրաշկոյի եւ Արաքսեան թատրոնների, Աւճալեան լսարանի, Զուբալովի ժողովրդական տան ներկայացումներում: Նա փայլուն դպրոց անցաւ Յ. Աբէլեանի, Սիրանոյշի, Գ. Պետրոսեանի, Օ. Մայսուրեանի, Յասմիկի եւ հայ բեմի ուրիշ վարպետների հետ համատեղ աշխատանքում: Գուլազեանը Հայաստանի Գաբրիէլ Սունդուկեանի անուան պետական թատրոնի հիմնադիր առաջին դերասանուհիներից է: Նա մարմնաւորել է շուրջ 300 կերպար, սակայն արուեստագիտուհու տաղանդն առանձին փայլով շողաց Սունդուկեանի գործերում: Այստեղ նա չունէր իր մրցակիցը: Կարելի է համարձակօրէն ասել, որ ոչ մի դերասանուհի չի հասել նրա Նատալիայի՝ «Խաթաբալա» եւ Կեկէլի՝ «Պէպօ» խաղի կատարելութեանը: Ստեղծագործութեան վաղ շրջանում խաղացել է Անտուանէտ, Դորին (Մոլիերի «Երեւակայական հիւանդ», «Տարտիւֆ»), Հենրի (Յա. Գորդինի «Օվկիանոսից այն կողմ»), Ալեօշկա (Գորկու «Յատակում»): Աննառու յաջողութեամբ պսակւեց Գայանէի դերակատարումը Իւժին-Սումբատովի «Դաւաճանութիւն»ում: 1921-1926ին աշխատել է Թիֆլիսի հայկական թատրոնում: Այստեղ առաջին հիանալի դերակատարումը գեղջկուհի Լաուրենսիան էր (Լոպէ դէ Վեգայի «Ոչխարի աղբիւր»ում): 1945ին հայ բեմի խոշոր այդ վարպետը լոյս ընծայեց իր «Յուշերը», վերամշակւած հրատարակութիւն՝ 1957: Նկարահանւել է «Հայֆիլմ» կինոստուդիայի «Զարէ», «Ուրւականները հեռանում են լեռները», «Առաջին սիրոյ երգը» գեղարուեստական կինոնկարներում: Օլգա Գուլազեանն արժանացել է պետական մրցանակների. 1952ին՝ ՍՍՀՄ պետական մրցանակ: 1967ին՝ ՀՍՍՀ պետական մրցանակ: Եղել է ՀՍՍՀ Գերագոյն Խորհրդի պատգամաւոր 1955-1959: Բացառիկ վարպետութեամբ աչքի ընկնող Օլգա Գուլազեանի լաւագոյն դերերից են՝ Կուկուշկինա (Օստրովսկու «Անօժիտը»), Քսենիա (Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը եւ ուրիշներ»), Հոռոմսիմ (Փափազեանի «Ժայռը»), Լամբրինին (Պարնիսի «Աֆրոդիտէի կղզին»), Էսֆիր (Կ. Գուցկովի «Ուրիէլ Ակոստա»), Մեծ Տիկին («Վարդանանք» ըստ Դեմիրճեանի պատմավէպի), Տիկին Բալբոա (Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում»): Վերջին դերակատարումը Մայր Բրոուդին էր՝ Կրոնինի «Բրոուդիի ամրոցը», 1963:



©1999 Alice Navasargian

# Olga Goulazian

Olga as Salome in Sundoukian's *Kandats Ojakh*
Սալոմէի դերում «Քանդած օջախ»



©1999 Alice Navasargian




As mother Brodie in Kronin's *Deacon Brodie*
Մայր Բրոուդիի դերում «Բրոուդիի ամրոցը»

©1999 Alice Navasargian

# Olga Goulazian



Olga as Ephemia in Sundoukian's *Bebo*
Էփեմիա, «Պէպօ»



As Ophelia in Shakespeare's *Hamlet*
Օֆելիա, «Համլետ»



As Shlomke in Gordin's *Mirele Efros*
Շլոմկէ, «Միրէլ Էֆրոս»



As Antonia in Mulier's *La Malade Imaginaire*
Անտուանետ, «Երեւակայական հիւանդը»



©1999 Alice Navasargian



Hasmik as Khamperi,
Aved Avedisian as Zambakhov,
Olga Goulazian as Natalia
in Sundoukian's *Khatabala*

Յասմիկը՝ Խամփերիի,
Աւետ Աւետիսեանը՝ Զամբախովի
եւ Օլգա Գուլազեանը՝ Նատալիայի դերերում
«Խաթաբալա»



©1999 Alice Navasargian



Olga Gulasian and Friends
Sitting left to right: Aved Avedisian, Olga, Hasmik, David Gulasian,
Standing left to right: Susan Garagashian, Arthur Babaian, Ashkhen and Amo Kharazian,
Nina Manoucharian and Levon Meserlian.

Օլգա Գուլազեան եւ ընկերներ
Նստած ձախից՝ Աւետ Աւետիսեան, Օլգա Գուլազեան, Յասմիկ, Դաւիթ Գուլազեան
կանգնած ձախից՝ Սուզան Գարագաշեան, Արթուր Պապեան, Աշխէն եւ Ամօ Խարազեան
Նինա Մանուչարեան եւ Լեւոն Մըսըրլեան

# Arous Voskanian
## Արուս Ոսկանեան
### 1889 - 1943

Arous Voskanian, "State Actress of the Armenian Republic" since 1935, was born in Constantinople. While still a student, instructors recognized her for her intelligence, rationality, and her exceptional good judgement. Arous first performed on stage in 1908 with the Abelian-Armenian Theater Group in Constantinople. She played the roles of Regina in Ibsen's *Ghosts*, and Emilia in Shakespeare's *Otello*. Arous met the famous actor and director Hovsep Voskanian while she was a member of the group. They fell in love and married in the Caucasus. From 1909-1911, Arous was in Baku at the Armenian Dramatic Theater. On the advice of Alexander Shirvanzadeh, she went to Tiflis to perform in the Armenian Theater. There, for the first time, she played the role of Sona in Shirvanzadeh's *The Evil Spirit* and enjoyed great success. Shirvanzadeh congratulated her and confessed that he could not have imagined a better performance. Arous was endowed with exceptional talent and brought poise and symmetry to her roles, as Cordelia in Shakespeare's *King Lear* and as Salome in Oscar Wild's *Salome*.

In 1921, Arous accepted an invitation from Yerevan to work in the first Armenian State Theater Group. She broadened her repertoire to include extreme comedy. This multi-talented actress continued with the following roles: Kruchinina in Ostrovsky's *An Ardent Heart*, and Katherine in Shakespeare's *Taming of the Shrew*, Anna in Eugene O'Neill's *Anna Christie*, Antigone in Sophocles' *Antigone*, Amalia in Schiller's *The Robbers*, Norma in Ibsen's *A Doll's House*, and Natasha in Shirvanzadeh's *Morgan's In Law*. She performed as the charming Susan in *Namus* and as the noble Margaret in *For Honor*, and her Ophelia in *Hamlet* and Desdemona in *Otello*, Juliet in *Romeo & Juliet*, Lady Macbeth in *Macbeth*, Portia in *The Merchant of Venice*, Rachel in Gorky's *Vassa Zheleznova*, and *The Lower Depths*, remain as extraordinary roles in the history of Armenian Theater. Arous was also blessed with talent in recitation, recited frequently, and taught stage reading in the Yerevan Theater Group. Poet Yeghishe Charents worshiped her art and dedicated several of his poems to her. Arous died during the full bloom of her career.

ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1935։ Արուս Ոսկանեանը ծնւել է Կ. Պոլսում։ Առաջին անգամ բեմ է բարձրացել 1908 թւականին եւ խաղացել Ռեգինա (Իբսէնի «Ուրւականներ»), Էմիլիա (Շեքսպիրի «Օթելլօ»), Աբէլեան-Արմենեան թատերախմբում, որտեղ նա ծանօթանում է անւանի դերասան եւ բեմադրիչ Յովսէփ Ոսկանեանին եւ ամուսնանում նրա հետ։ 1909-1911 Արուս Ոսկանեանին տեսնում ենք Բաքւում, հայ դրամատիկ թատրոնի բեմում։ Նրա խաղընկերներն էին՝ Աբէլեանը, Զարիֆեանը, Արմենեանը, Սիրանոյշը։ Ալեքսանդր Շիրվանզադէի խորհրդով, 1917–ին նա գալիս է Թիֆլիս եւ միանում հայկական թատրոնին։ Այստեղ առաջին անգամ հանդէս է գալիս Սոնայի դերով (Շիրվանզադէի «Չար ոգի») եւ ունենում է մեծ յաջողութիւն։ Շիրվանզադէն շնորհաւորելով նրան՝ խոստովանում է, որ աւելի լաւ դերակատարում չէր կարող պատկերացնել։ Արուս Ոսկանեանը օժտւած էր բացառիկ տաղանդով։ Այդ շրջանի նշանաւոր անձնաւորումներից են՝ Քորդելիա (Շեքսպիրի «Լիր արքայ»), Մոնա Վաննա (Մետեւլինկի «Մոնա Վաննա»), Սալոմէ (Օսկար Ուայլդի «Սալոմէ»)։ 1921 թ. Արուս Ոսկանեանը հրաւիրւում է Երեւան՝ Հայաստանի առաջին պետական թատրոն, ուր եւ աշխատում է մինչեւ կեանքի վերջը։ Բեմի ճշմարիտ եւ բազմաշնորհ այս արւեստագիտուհին սկսելով օպերետներից, շարունակեց ներկայացնել բարդ դերակատարումներ, ինչպէս՝ Կրուչինինա, Կատէրինա (Օստրովսկու «Անմեղ մեղաւորներ» «Ամպրոպ»), Անտիգոնէ (Սոֆոկլէսի «Անտիգոնէ»), Կատրին (Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը»), Ամալիա (Շիլլերի «Աւազակներ»), Նորա (Իբսէնի «Նորա») Աննա (Օ՛Նիլի «Աննա Քրիստի»), Նատաշա, Մարգարիտ (Շիրվանզադէի «Մորգանի խնամին», «Պատւի համար»), Անոյշ (Պարոնեանի «Պաղտասար աղբար»)։ Նրա Ջուլիետը, Լէյդի Մակբէթը, Օֆելիան, Դեզդեմոնան, Միսըզ Ֆորդը, Պորցիան (Շեքսպիրի «Ռոմէօ եւ Ջուլիետ», «Մակբէթ», «Համլետ», «Օթելլօ», «Վինձորի զւարճալի կանայք», «Վենետիկի վաճառականը»), Ռաշէլը, Նաստիան (Գորկու «Վասսա Ժելեզնովա», «Յատակում»), հայ թատրոնի պատմութեան մէջ կմնան որպէս եզակի խաղարկումներ։ Բեմական անձնաւորման բացառիկ անձնաւորութիւններից են՝ Ռուքաիա եւ Զէյնաբ (Իւժին-Սումբատովի «Դաւաճանութիւն»), Լիզիա (Հ. Մենկեւիչի «Յո՞ երթաս»)։ Նա խաղացել է նաեւ ռուս ժամանակակից հեղինակներ՝ Լունաչարսկու, Տրենյովի, Պոգոդինի, Աֆինոգենովի, Ֆայկոյի, Շկւարկինի պիեսներում։

Մեծ դերասանուհին հանդէս էր գալիս նաեւ իբրեւ ասմունքող։ Նա բեմական խօսք էր դասաւանդում Երեւանի թատերական ուսումնարանում։ Նա գրել է թատերագիտական յօդւածներ, թողել է օրագիր եւ յուշեր։



©1999 Alice Navasargian

# Arous Voskanian



Arous as Rodendla Hauptman's *Sunken Bell*
«Ջրասույզ զանգը»

©1999 Alice Navasargian



Arous as Ophelia in *Hamlet*
Օֆելիայի դերում «Համլետ»

©1999 Alice Navasargian

# Arous Voskanian



Arous as Portia in Shakespeare's *Merchant of Venice*
Պորցիայի դերում «Վենետիկի վաճառականը»

©1999 Alice Navasargian



Arous as Susanna in Beaumarché's *The Marriage of Figaro*, Gurgen Janibegian as Figaro
Սիւզանի դերում «Ֆիգարոյի ամուսնութիւնը», Ֆիգարո՝ Գուրգէն Ջանիբէկեան



©1999 Alice Navasargian

As Margaret in Shirvanzade's *Namous*, Hrachia Nersisian as Elizbarow
Մարգարիտի դերում «Պատւի Համար», Էլիզբարովի դերում Հրաչեա Ներսիսեան



©1999 Alice Navasargian

# Haiganoush Danielian

# Հայկանուշ Դանիէլեան

1893 - 1958

Haiganoush Danielian, opera and symphony soloist, was born in Tiflis. In 1920, she graduated from the Petrograd conservatory after studying under famed Professor Iretsgaya.

During 1920-1921, she performed in the musical comedic theater of St. Petersburg. For ten years she was one of the great stars and soloists of the Tiflis Opera and Stage, and at the same time participated in Leon Isetsky and Shara Talian's opera-operetta group of Leninakan. Haiganoush was one of the founders and stars of the Yerevan Theater. From 1932 until her death, Haiganoush was one of the foremost singers in the State Opera and performed for nearly twenty years. She had high artistic temperament and rare mastery and artistic sense. She displayed that talents in the following roles: Anoush in Tigranian's *Anoush*, Olympia in Chukhajian's *Arshag II*, Sofi in Ayvazian's *Taparnikos*, Maro in Paliashvilou's *Daisy*, Marfan in Rimsky-Korsakov's *The Tsar's Bride*, Rosina in Rossini's *Barber of Seville*, Desdemona in Verdi's *Otello*, Gilda in *Rigoletto*, Mimi in Puccini's *La Bohème*, Chio Chio San in *Madama Butterfly*, Antonida in Glinka's *Ivan Susanin*, Margarita in Gonoud's *Faust*, Gilda in *Rigoletto*, Lakmen in Delibe's *Lakme*, and Margarite in Meyerbeer's *The Huguenots*.

Haiganoush also performed exceptionally as a lyric musical star. She included the songs and romances of Tchaikovsky, Rimsky-Korsakov, Rachmaninoff, and Glazunov, Gomidas, Spendiarian, and Melikian in her repertoire. She was the master of various national musical genres and communicated in those songs an unparalleled charm, an original enthusiasm and beauty.

From 1943-1951, Haiganoush taught at the Yerevan Music Conservatory. From 1949-1952, she was the director of the ten-year-old Tchaikovsky Music School. In 1939, during a ten-day Armenian cultural festival, she received the title of "Popular Artist" for her role as Anoush. In 1946, she earned the honorary title of "State Laureate of Armenia". The "Haiganoush Danielian School of Music" in Yerevan is named after her.

Երգչուհի, քնարա-կոլորատուրային սոպրանո Հայկանուշ Դանիէլեանը ծնւել է Թիֆլիսում։ 1920-ին աւարտել է Պետրոգրադի կոնսերւատորիան, աշակերտելով յայտնի պրոֆեսոր Իրեցկայային։ 1920-21 թթ. երգչուհին ելոյթներով հանդէս է եկել Պետրոգրադի երաժշտական կատակերգութեան թատրոնում։ Տասը տարի եղել է Թիֆլիսի օպերայի եւ բալետի թատրոնի առաջատար մենակատարներից ու, միաժամանակ, մասնակցել է Լեւոն Իսեցկու եւ Շարա Տալեանի գլխաւորած օպերա-օպերետների խմբում, որը գործում էր Լենինական քաղաքում։

Հայկանուշ Դանիէլեանը Երեւանի օպերային թատրոնի հիմնադիր ու առաջատար դէմքերից էր։ 1932 թւականից մինչեւ կեանքի վերջը նա հանդէս է եկել որպէս ազգային օպերայի առաջատար երգչուհի ու կերտել մօտ երկու տասնեակ լիարժէք կերպարներ։ Բեմական բարձր արւեստով, հազւագիւտ վարպետութեամբ եւ գեղարւեստական կատարելութեամբ անձնաւորած նրա կերպարներից են՝ Անուշը (Տիգրանեանի «Անուշ»), Օլիմպիան (Չուխաճեանի «Արշակ Բ»), Սոֆին (Այազեանի «Թափառնիկոս»), Մարօն (Պալիաշվիլիի «Դաիսի»), Անտոնիդան (Գլինկայի «Իւան Սուսանին»), Մարֆան (Ռիմսկի-Կորսակովի «Թագաւորի հարսնացուն»), Ռոզինան (Ռոսսինիի «Սեւիլեան սափրիչ»), Մարգարիտ Վալուան (Մէյերբէրի «Հուգենոտներ»), Ջիլդան, Դեզդեմոնան (Վերդիի «Ռիգոլետտօ», «Օթելլօ»), Միմին, Չիօ Չիօ-Սանը (Պուչչինիի «Բոհեմա», «Մադամ Բաթըրֆլայ»), Մարգարիտ (Գունոյի «Ֆաուստ»)։

Հայկանուշ Դանիէլեանը հանդէս է եկել նաեւ որպէս սենեկային երաժշտութեան կատարող։ Իր երգացանկում նա ընդգրկել է Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Ռախմանինովի, Գլազունովի երգերն ու ռոմանսները։ Նա միաժամանակ հայրենի երգին՝ Կոմիտաս, Սպենդիարեան, Ռ. Մելիքեան, հաղորդում էր անկրկնելի հմայք, ինքնատիպ երանգ ու գեղեցկութիւն։

1943-1951 թթ. երգչուհին դասաւանդել է Երեւանի Կոմիտասի անւան կոնսերւատորիայում, իսկ 1949-1952 թթ. եղել է Երեւանի Չայկովսկու անւան երաժշտական տասնամեայ դպրոցի տնօրէնուհին։

1939 թւին, Մոսկւայում հայ արւեստի տասնօրեակի օրերին, Անուշի փայլուն դերակատարման համար նա արժանացել է ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհու բարձր կոչման եւ պարգեւատրւել շքանշանով։ 1946 թւականին Անտոնիդայի եւ Մարգարիտ Վալուայի դերակատարման համար նրան շնորհւում է ՍՍՀՄ պետական մրցանակ։

Հայկանուշ Դանիէլեանի անունով է կոչւում Երեւանի երաժշտական դպրոցներից մէկը։



©1999 Alice Navasargian



Haiganoush Danielian

©1999 Alice Navasargian

# Haiganoush Danielian



Hayganoush as Anoush in Armen Dikranian's *Anoush*, Shara Talian as *Saro*
Անուշի դերում «Անուշ»



©1999 Alice Navasargian



Seated (second from left): Opera singer Hayganoush Danielian, Marshal Hovhannes Bagramian, actor Aved Avedisian,
Standing (second from left): Armen Gulakian, Academician Victor Hambardzumian, David Malian

Նստած (ձախից՝ երկրորդ) Հայկանուշ Դանիէլեան, Մարշալ Յովհաննէս Բաղրամեան, Աւետ Աւետիսեան
Կանգնած (ձախից՝ երկրորդ) Արմէն Գուլակեան, Վիկտոր Համբարձումեան, Դաւիթ Մալեան

Zabel Panossian Aram was born in the small town of Bardizag in Western Armenia. Her family emigrated to the United States in 1907. The following year she began studying the piano and voice with Gerthrud Dahena. Dahena helped shape Zabel's voice into a recognizable and glorious instrument. Zabel sang while accompanying herself on the piano.

Her inner spiritual dimension and rich soprano reflected her inner world. She stated, "The timber of a voice is an expression of a singer's soul." Her first degree from local college was musical education, and she won several awards and scholarships.

While still a student in 1920, Zabel was invited to sing as Abishe in Del Castello's *The Chosen King* at the Boston Opera Hall. During the same year she went to Europe and, until 1924, studied at the music conservatories of Rome, Milan, Paris, and Geneva.

Zabel became more recognized when she began doing operas and lyric operas in London, Manchester, Cairo, and Greece. No matter how famous she grew, she was totally devoted to her native composers and songs.

In 1919, she had performed with the most famous singer in Armenia, Shara Dalian. She sang all Armenian songs, and that same year she performed many of Gomidas' songs solo; *Keler-Tsoler, Hov Arek, Kroong, Andouni, Yes Saren Googayi, Ganche Kroong Ganche,* and *Im Chinari Yares.* Zabel met Gomidas in Paris in 1920. She wrote about her first meeting with him in the *Veradznound* newspaper. She traveled to Rome where she sang arias from Puccini, Rossini, Verdi, Bizet, Schuman, Schubert and Monteverdi. She was given the most prestigious award of Opera La Scala in Milan, The "Serata in Honore".

From 1932 to 1948, she was still a star in Europe, the United States, and South America. She lived the last years of her life in Boston.



## Zabel Aram

## Զաբէլ Արամ

1893 - 1986

Զաբէլ Արամը՝ Փանոսեան, ծնւել է Պարտիզակում: 1907-ին ծնողների հետ գաղթել է Ամերիկա, հաստատւել Բոստոնում: Ձայնը մշակել է Գերտրուդ Դահենայի մօտ: 1919-ին համատեղ համերգ է տւել Արմենակ Շահմուրադեանի հետ: Ապա նոյն թւին մի ամբողջ յայտագիր նւիրել է Կոմիտասի երգերի կատարմանը. «Քելեր, ցոլեր», «Հով արէք», «Կռունկ», «Անտունի», «Ես սարէն կուգայի», «Իմ չինարի եարը» եւ այլն:

1920-ին հրաւիրւում է Բոստոնի օպերայում կատարելու Աբիշիայի դերերգը Լոյդ դէլ Կաստիլոյի «Ընտրեալ թագաւորը» օպերայում: Նոյն թւին մեկնել է Իտալիա: Միլանի, Հռոմի, Փարիզի եւ Ժնեւի կոնսերւատորիաներում կատարելագործել է իր արւեստը: Այդ քաղաքներում, ինչպէս նաեւ Մանչեստրում, Կաhիրէում, Ալեքսանդրիայում Կոմիտասի երգացանկով հանդէս է եկել բազմաթիւ համերգներով:

1920-ի աշնանը Փարիզում Զաբէլ Արամը ծանօթանում է Կոմիտասի հետ: Կոմիտասի եւ նրա հետ զրոյցների մասին Զաբէլ Արամը գրել է «Վերածնունդ» թերթում եւ Թէոդիկի «Ամենուն Տարեցոյց»ում 1922 թւին: 1923-ին Հռոմում հանդէս է եկել Ռոզինա (Ռոսսինիի «Սեւիլեան սափրիչը»), Ջիլդա («Վերդիի «Ռիգոլետտօ») դերերգերով եւ մեծ համբաւի արժանացել: Հռոմի գեղարւեստական միութիւնը նոյն թւի Յունիսի 21-ին Զաբէլ Արամի պատւին յատուկ երեկոյթ է կազմակերպել Միլանում եւ նրան են յանձնել «Սերադաին հոնորէ» պատւարժան տիտղոսը:

Զաբէլ Արամը երգել է սոպրանոյի երգամասեր Պուչչինիի, Վերդիի, Բիզէի օպերաներից, ինչպէս նաեւ Շուբերտի, Շումանի, Գլիւկի, Մոնտէվերդիի ստեղծագործութիւններից: 1932-33-ին բազմաթիւ երգահանդէսներ է ունեցել իր դստեր՝ Ադրինէ Օթերոյի հետ: Մինչեւ 1948 թիւը Զաբէլ Արամը երգում էր Եւրոպայի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի բեմերի վրայ:



©1999 Alice Navasargian

Zabel Aram



©1999 Alice Navasargian

# Rose Zulalian
# Ռոզ Զուլալեան
## 1895 - 1972

Rose Zulalian was born in Diarbegir, Western Armenia. At an early age, the Armenian born American gained an enviable reputation as an interpreter of native folk songs.

After many successful public appearances, she retired from public singing to further develop her natural talents. Rose is blessed with a contralto voice of great range and beauty. To this she has added a vivid sense of interpretation, intensified by her Oriental training.

Her reappearance before the public was sensational. Critics acclaimed her to be one of America's foremost contraltos, consistently citing her artistic range and sheer beauty of voice. She has sung with great success in oratorios, operas, and many national conventions. Her major operatic roles include Amneris in Verdi's *Aida*, Azucenna in Verdi's *Trobadour*, and Carmen in Bizet's *Carmen*. Her vast repertoire includes Schubert Scarlatti, Mozart, Brahms, and Schuman. A critic wrote: – *Zulalian's voice is rich and creamy, unusually opulent with velvety texture and with an outstanding quality.*

Some critics compared her voice to the sound of a violin. Rose's classical and lyrical versatility made her a rare performer; Menotti's *The Medium*, Britten's *A Midsummer Night*, Roussel's *Padmavati*, Puccini's *Gianni Schicci*, Strauss' *Capriccio*, *The Love of Dance*, and *The Silent Woman*. She spent the last years of her life in Boston. Rose Zulalian has dub the singing voices of famous motion picture stars for movie studios.

Երգչուհի (կոնտրալտո) Ռոզ Զուլալեանը ծնուել է Արեւմտեան Հայաստանում՝ Դիարբեքիրում: ԱՄՆ-ի երգարուեստի քննադատները նրա ձայնը համեմատել են ջութակի հետ: Մամուլում շատ է գրուել նրա ձայնի զօրեղութեան եւ ճկունութեան, գեղեցիկ երանգի, լիքը, տաք, թաւ հնչիւնների մասին: Նաեւ հիացմունքով են արտայայտուել նրա զանգի ղօղանջի յստակութեամբ հնչող ամենաբարձր ձայնանիշերի, ձայներանգների հարստութեան, խորութեան ու նրբութեան, կատարողական, արտիստական բարձր կարողութիւնների մասին: Զուլալեանը ունէր երեք ու կէս օկտաւա ձայնածաւալ:

Նա կամերային եւ օպերային երգչուհի էր, արտակարգ զօրեղ եւ ճկուն ձայնով: Նրա կամերային երգացանկում ընդգրկուած են եղել Սկարլատտիի, Մոցարտի, Շուբերտի, Շումանի, Բրամսի երկերից մինչեւ հայկական եւ ամերիկեան երգեր: Ռոզ Զուլալեանի դասական եւ քնարական բազմաշնորհութիւնը նրան դարձրեց բացառիկ կատարող՝ Մենոտտիի «Ոգեհարցը», Բրիտտէնի «Միջամառային գիշեր», Ռուսէլի «Պադմաւատի», Պուչչինիի «Ջիաննի Չիչչի», Շտրաուսի «Կապրիչչիոն», «Պարի սէրը», «Լռակեաց կինը»:

*«Նրա պիանիսիմոները Շուբերտի երգերում իրական ձայնի կարողութիւն եւ ճկունութիւն են ցուցաբերում»:* (Ֆիլադելֆիա Բուլետին)

*«Կարմէնի կատարումով Ռոզ Զուլալեանը ցուցաբերեց յստակ կամերային ձայն, հիանալի դիմախաղ ու կեցուածք եւ բացառիկ տեխնիկա»:* *(Բոստոն Հերալդ)*

Ռոզ Զուլալեանը երգել է որպէս ձայնափոխանորդ զանազան կինոնկարներում:



©1999 Alice Navasargian




©1999 Alice Navasargian

# Ruzanna Vartanian
# Ռուզաննա Վարդանեան
## 1898 - 1957

Ruzanna Vartanian, actress and professor, was born in Chamakhi. From 1927, she worked in the First State Theater of Yerevan. She spent her entire dramatic career on the stage of the great Sundoukian Theater. Rouzanna could play any role with equal verve, from period piece to the modern, from local girl to women of diverse characteristics.

Aside from her immense acting ability, Ruzanna was strikingly beautiful, had a resonant yet mellifluous voice, perfect diction and dialect, and captivating charm. She quickly became a favorite of Armenian audiences.

Among her most memorable roles were: Susan in Sundoukian's *Namus*, Margarit in *For Honor*, Gegel in *Bebo*, Sara as Nar-Dos' *The Dead Pigeon*, Heriknaz in *The Matter of Bread*, Areg in Giulakian's *Dawn*, Arousiag in Borian's *Under the Same Roof*, Polina in Ostrovskyy's *The Lucrative Office*, and Shurka in *Yegor Bulychov and Others*, Larissa in *The Disinherited*, Lida in Kornechuk's *Platoon Krechet*, Ransevskaya as Chekov's *The Rasberry Farm*, Rosie in Beaumarché's *The Marriage of Figaro*, Desdemona in Shakespeare's *Otello*, Ophelia in *Hamlet*, Louisa in Schiller's *Love and Cherish*, and Hanna in Virtaus' *The Conspiracy of the Convicts*. Ruzanna also was famous for her inspired recitations, and she was a revered and respected teacher. She began teaching the art of recitation in 1931 at the conservatory. She also taught film and acting at the Yerevan Theater Institute from its inception. Ruzanna Vartanian became Popular Artist of the Republic of Armenia in 1944, the same year in which she began work at the Art and Theater Institute of Yerevan.

ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1944, Ռուզաննա Վարդանեանը ծնուել է Շամախիում: 1921-ից մասնակցել է Ստաւրոպոլի հայկական թատրոնի ներկայացումներին, որոնք կազմակերպել եւ ղեկավարել է եղբայրը՝ նշանաւոր թատերական գործիչ Վաւիկ Վարդանեանը: 1927-ից աշխատել է Երեւանի առաջին պետական թատրոնում: Իր պրոֆեսիոնալ բեմական կեանքի բոլոր տարիները անց է կացրել Գ. Սունդուկեանի անուան թատրոնում, ուր նա ապրել է տարբեր ժամանակների ու ազգութիւնների, տարբեր բնաւորութիւնների կանանց կեանքով: Ունենալով դերասանական հիանալի տուեալներ՝ գեղեցիկ, հնչեղ ձայն, անթերի առոգանութիւն, որին նա ազատ տիրապետում էր, Վարդանեանը մէկը միւսի ետեւից անձնաւորեց բազմաթիւ գլխաւոր դերեր եւ դարձաւ հայ թատրոնի բացառիկներից: Նա խաղացել է հայ, ռուս եւ այլ ազգերի պատկանող կանանց բազմաթիւ կերպարներ, ներկայացնելով մարդկային բարձր նկարագրով: Նրա մարմնաւորած կերպարներից են՝ Կեկէլ (Սունդուկեանի «Պէպօ»), Հերիքնազ («Հացի խնդիր», ըստ Պ. Պռօշեանի), Սուսան, Մարգարիտ (Շիրվանզադէի «Նամուս», «Պատուի համար»), Սառա (Նար-Դոսի «Սպանուած աղաւնի»), Արեգ (Ա. Գուլակեանի «Արշալոյսին»), Արուսեակ (Բորեանի «Նոյն յարկի տակ»), Պոլինա, Լարիսա (Օստրովսկու «Եկամտաւոր պաշտօն», «Անօժիտը»), Շուրկա (Գորկու «Եգոր Բուլըչով եւ ուրիշներ»), Լիդա (Կոռնէյչուկի «Պլատոն Կրեչետ»), Ռանեւսկայա (Չեխովի «Բալենու այգի»), Ռոզի (Բոմարշէի «Ֆիգարոյի ամուսնութիւնը»), Դեզդեմոնա, Օֆելիա (Շեքսպիրի «Օթելլօ», «Համլետ»), Լուիզա (Շիլլերի «Սէր եւ խարդաւանք»), Հաննա (Վիրտայի «Մահապարտների դաւադրութիւնը») եւ այլն: Ռուզաննա Վարդանեանը փայլում էր նաեւ գեղարուեստական ասմունքի ասպարէզում: Դեռեւս 1931-ից բեմական խօսք է դասաւանդել թատերական ուսումնարանում, կոնսերւատորիայում, կինոստուդիայում, օպերային թատրոնում, իսկ 1944-ից՝ ստեղծման օրից, Երեւանի Գեղարուեստա-թատերական ինստիտուտում:

Ruzanna as Lidia in Kronichoock's *Platoon Krechet*
Լիդայի դերում, «Պլատոն Կրեչետ»

©1999 Alice Navasargian

Ruzanna Vartanian



©1999 Alice Navasargian

# Goharineh Melkoumian
# Գոհարինէ Մելքումեան
1898- 1957

Goharineh Melkoumian, operetta star and director, was born in Tiflis and graduated from the Tiflis Conservatory. In 1922, while studying directing, she became a soloist at the Stanislavski Opera School in Moscow.

In 1936, she performed many operas with the Spendiarian Theater, most prominently as Floria Tosca in Puccini's *Tosca* and Mimi in *La Bohème*. In 1938, she began directing in the theater and continued for more than two decades, staging many operas; Puccini's *Madama Butterfly*, *La Bohème*, *Tosca*, Delibe's *Lakme*, Rossini's *The Barber of Seville*, Rimsky-Korsakov's *Sadko*, Verdi's *The Troubadour*, Dikranian's *David Beg*, and many others. In 1956, she was named "Artist of the Republic of Armenia".

Goharineh Melkoumian came to the stage during a time of stout rejuvenation. Artists refreshed repertoires and created new operas. Being well acquainted with musical literature, she had great style and was very demanding in her choice of operas, as soloist and director. Her stage settings were colorful and captivating. Especially successful were her group scenes, which became true accomplishments of the stage. Goharineh Melkoumian also became involved in pedagogical work and for many years directed classes at the Yerevan State Music Opera.

Օպերային երգչուհի եւ բեմադրիչ Գոհարինէ Մելքումեանը ծնւել է Թիֆլիսում: 1956 թւին: Արժանացել է ՀՍՍՀ վաստակաւոր գործչի կոչման: Աւարտել է Թիֆլիսի կոնսերւատորիան: 1922-ին ընդունւել է Մոսկւայի Ստանիսլաւսկու անւան օպերային թատրոն՝ որպէս մենակատարուհի, միաժամանակ մասնակցել է բեմադրիչի դասընթացների:

1936 թւին աշխատանքի է անցել Ալ. Սպենդիարեանի անւան օպերայի եւ բալետի թատրոնում ու հանդէս եկել Ֆլորիա Տոսկա, Միմի (Պուչչինիի «Տոսկա», «Բոհեմա») եւ այլ դերերգերով: 1938 թւից աշխատանքի է անցել նոյն թատրոնում, որպէս բեմադրիչ: Բեմադրել է բազմաթիւ օպերաներ, որոնցից են՝ «Մադամ Բաթըրֆլայ», «Բոհեմա», «Տոսկա», «Լակմէ», «Սեւիլեան Սափրիչ», «Վաճառւած հարսնացուն», «Տրուբադուր», «Դաւիթ բէկ» եւ այլն:

Գոհարինէ Մելքումեանը թատրոն եկաւ այն ժամանակ, երբ խաղացանկ կազմելու որոնումներ ու նորը ստեղծելու փորձեր էին կատարւում: Քաջատեղեակ լինելով երաժշտական գրականութեանը, նա օպերաների ընտրութեան ու բեմադրման գործում ցուցաբերեց մեծ պահանջկոտութիւն ու մասնագիտական հմտութիւն: Նրա բեմադրութիւնները գունագեղ էին, հմայիչ, մատուցւած բեմական հնարամիտ ձեւերով. առանձնապէս յաջող էին խմբական տեսարանները, որոնք դառնում էին բեմադրական ճշմարիտ նւաճումներ:

Գոհարինէ Մելքումեանը ծաւալել է նաեւ մանկավարժական գործունէութիւն, երկար տարիներ ղեկավարել է Երեւանի պետական կոնսերւատորիայի օպերային դասարանը:



©1999 Alice Navasargian

Gorharineh Melkoumian



©1999 Alice Navasargian





Puccini's *La Bohème*, director Goharineh Melkoumian, Yerevan
Պուչչինիի «Բոհեմա». բեմադրիչ՝ Գ. Մելքումեան Երեւան



Rossini's *Barber of the Seville*, third act, director G. Melkoumian, Yerevan
Ռոսսինիի «Սեւիլեան սափրիչը». բեմադրիչ՝ Գ. Մելքումեան Երեւան



©1999 Alice Navasargian



Armen Dikranian's *David Beg*, second act, director G. Melkoumian, Yerevan
Արմէն Տիգրանեանի «Դաւիթ բէկ». բեմադրիչ՝ Գ. Մելքումեան, Երեւան



Puccini's *Tosca*, director G. Melkoumian, Yerevan
Պուչչինիի «Տոսկա». բեմադրիչ՝ Գ. Մելքումեան, Երեւան



B. Smetana's *The Bartred Bride*, director G. Melkoumian, Yerevan
Սմետանա, «Վաճառուած հարսնացուն». բեմադրիչ՝ Գ. Մելքումեան, Երեւան



©1999 Alice Navasargian



Delibe's *Lakme*, second act, director G. Melkoumian, Yerevan
Դելիբէի «Լակմէ». բեմադրիչ՝ Գ. Մելքումեան, Երեւան

©1999 Alice Navasargian

# Isabella Danzas
# Իզաբելլա Դանզաս
1903 - 1994

Actress Isabella Danzas was born in New Nakhijevan. She received her education at the Doni-Rostov Music Conservatory in 1920 as a pianist.

She began her acting career in 1926 and played the role of Peri in the Tigranian's *Anoush* opera. That role revealed her graceful music and acting abilities, not to mention her natural aptitude as a dancer. During that time, she was invited to join the Rostov Comedic Opera and successfully played the following roles: Natasha in Shirvanzadeh's *Morgan's in Law*, Austian in Ayvazian's *Katch Nazar*, Mirabella in Straus' *The Gypsy Baron*, and Katherine in Shakespeare's *Taming of the Shrew*.

She often played the role of the *soubrette*. Isabella also was an accomplished tragic opera star and played with Vahram Papazian as Desdemona in *Otello* and with Issahak Alikhanian as Lydia in *Kornie's Platun Kreched*.

With her husband, well-known actor and director Haig Danzas, she performed in Baku, Krasnodar, Yerevan, Leninakan, in the Tiflis Armenian Theater, and in the Russian Theater of the Ukraine.

In 1941, the State Music Comedic Theater was established in Yerevan. Isabella and her husband were two of the founders, organizers, and stars. For more than fifty years Isabella was a pillar of the group and played more than 150 roles.

Some of her most memorable roles were Sylva in Kalman's *Sylva*, Sophie in Baronian's *The Oriental Dentist*, Diana in Lope de Vega's *For Others Crazy, For himself Smart*, Bianca in *Much Ado About Nothing*.

In 1950, Isabella received the honor of "Popular Artist of the Republic of Armenia".

ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1950, Իզաբելլա Դանզասը ծնւել է Նոր Նախիջեւանում։ 1920 թւին աւարտել է Դոնի-Ռոստովի երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը։ Բեմ է բարձրացել 1926-ին, կատարելով Փերիի դերը Տիգրանեանի «Անուշ» օպերայում։ Այդ դերակատարումով բացայայտւում են շնորհալի երիտասարդուհու երաժշտական ու դերասանական ընդունակութիւնները։ Իզաբելլա Դանզասը ունէր նաեւ պարային արւեստի ինքնայատուկ զգացողութիւն։ Նոյն թւին հրաւիրւում է Ռոստովի երաժշտական կատակերգութեան թատրոն եւ յաջողութեամբ խաղում Նատաշա (Շիրվանզադէի «Մորգանի խնամին»), Ոստիան ( Այւազեանի «Քաջ Նազար»), Միրաբելլա (Շտրաուսի «Գնչուների բարոն»), Կատարինա (Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը») եւ այլ օպերետներում, բոլորի մէջ կատարելով կոմեդիական դերեր։ Նա յայտնի է նաեւ որպէս ողբերգակ դերասանուհի. Վահրամ Փափազեանի հետ հանդէս է եկել (Դեզդեմոնայի դերում «Օթելլօ»), իսկ Իսահակ Ալիխանեանի հետ՝ Լիդայի դերում (Կորնէյչուկի «Պլատոն Կրեչետ»)։ Ամուսնու օպերային նշանաւոր դերասան եւ բեմադրիչ Հայկ Դանզասի հետ խաղացել է Բաքւի, Կրասնոդարի, Երեւանի, Լենինականի, Թիֆլիսի հայկական, ապա նաեւ Ուկրաինիայի ռուսական թատրոններում։ 1941 թւին Երեւանում հիմնադրւում է Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, որի գլխաւոր կազմակերպիչներն ու աչքի ընկնող դերասանները դառնում են Դանզաս ամուսինները։ Աւելի քան յիսուն տարի այդ թատրոնի սիւներից մէկը եղաւ Իզաբելլա Դանզասը ու մարմնաւորեց 150-ից աւելի բեմական կերպարներ, որոնց զգալի մասը մնաց անգերազանցելի։ Նրա Էլիզան (Շոուի «Պիգմալիոն»), Սիլվան (Կալմանի «Սիլվա»), Սոֆին (Պարոնեանի «Ատամնաբոյժն արեւելեան»),Դիանան (Լոպէ դէ Վեգայի «Այլոց համար յիմար, իրեն համար խելօք»), Բիանկան (Շեքսպիրի «Ոչնչից մեծ աղմուկ») մնում են որպէս կատակերգական բնութագրական կերպարների անձնաւորման փայլուն դրսեւորումներ։



©1999 Alice Navasargian



Isabella as Shoushan in Sundoukian's *Bebo*
Շուշանի դերում «Պէպօ»

©1999 Alice Navasargian

# Siroon Mangurian
# Սիրուն Մանգուրեան
1904- 1989

Siroon Mangurian was born in Van, Western Armenia. As a child, she loved to sing and dance, but she never had the opportunity to study because her life was cruelly interrupted, together with millions of Armenians, when she experienced one of the darkest pages in history, the Armenian genocide in 1915. Siroon and her father reached the United States in 1921. One year later, Siroon was married at the age of fifteen. Her new life presented her with fresh responsibilities and difficulties, the most important being the language barrier. Her one intense desire was to learn all about music, never thinking of becoming a professional musician. After the family moved to Los Angeles, California in 1929, Siroon Mangurian continued to develop her voice at Los Angeles City College. There, she studied languages, related music courses, and intensive opera coaching. She won many awards and scholarships and participated in several programs while still a student, including cum laude honors for three years. Among her voice teachers were Helen Bates Omeron and Demetri Andreo. Siroon's first important performance was at the Los Angeles Philharmonic, playing the rolls of Micaella and Carmen in Bizet's *Carmen*. Her portrayal of Carmen was so outstanding it caught the attention of Metro-Goldwyn-Mayer and Colombia Pictures. The studios contracted her to dub the singing voices of famous motion picture stars, Janet Mac Donald, Katherine Grace and Irene Dunne in musical movies. Because of her three and a half octave voice, in 1932, she played various roles such as Alice in Donizetti's *Lucia de Lamermor*, Carmen in Bizet's *Carmen*, Rossina in Rossini's *Barber of the Seville* at Los Angeles' Grand Opera. Siroon co-starred with the famous Lily Pons as Lucia, Francesco Merly of La Scala and the Metropolitan Opera, Alfredo Gandolfi, and Lois d'Angelo of the Metropolitan Opera.

Subsequent performances included appearances at the Hollywood Bowl with such artists as Maria Jeritza and Novanta. She was a member of the Los Angeles and San Francisco Grand Operas and the American Opera Company and a featured soloist with the National Broadcasting Company.

Siroon performed the following mezzo-soprano roles: Carmen in Bizet's *Carmen*, Biscayan in Verdi's *The Troubadour*, Aida in *Aida*, Giovanna in *Rigoletto*, Czipra in Strauss' *Gypsy Baron*, Agricola in Strauss' *A Night in Venice*, Beppe in Mascagni's *Frend Fritz*, Lola in Mascagni's *Cavalleria Rusticana*. She sang with some of opera's biggest stars, Claudia Muzio, Richard Bonelli, Mario Chamlee, and Mona Poli.

Siroon traveled throughout the United States and South America. She also presented solo recitals on the stages of the major concert halls of North America. In her performances, she never forgot her native Armenian composers Gomidas and Gara Murza.

The unusually sensuous quality of her three-and-a-half octave voice, as well as her vocal and interpretive abilities merited the warm appreciation of critics and fans. In her seventies, Siroon left the stage and became a successful and well-known ceramist and painter. Siroon Mangurian was a founder of the Armenian Allied Arts Association.

Սիրուն Մանգուրեանը՝ Շահինեան, ծնել է Արեւմտեան Հայաստանում՝ Վանում։ Մանկութիւնից սիրում էր երգն ու պարը, բայց հնարաւորութիւն չունէր սովորելու։ Կեանքը դաժանօրէն խանգարում է, այն ժամանակ, երբ նա միլիոնաւոր հայերի հետ միայն պատմութեան ամենամռայլ էջի՝ հայերի 1915-ի ցեղասպանութեան փորձն ունէր։ 1921-ին Սիրունը եւ նրա հայրը մեկնեցին Միացեալ Նահանգներ։ Նոր կեանքը նրան նոր դժարութիւնների ու պարտաւորութիւնների առջեւ դրեց, որոնցից ամենակարեւորը լեզուական արգելքն էր։ Այնուամենայնիւ, երգելու սէրը չնւազեց, որին նփրւեց ընդմիշտ։ 1929-ին ընտանիքով տեղափոխւեց Քալիֆորնիա, շարունակեց ձայնի մշակումն ու երաժշտական կրթութիւնը, Լոս Անջելէսի Սիթի քոլեջում, որտեղ սովորեց նաեւ տարբեր լեզուներ, օպերային բեմադրութիւն, արժանանալով պարգեւների եւ կրթաթոշակների։ Դեռեւս ուսանող, նա մասնակցեց բազմաթիւ ծրագրերի։ Երեք տարի արժանացաւ պատւոգրերի։ Նրա ձայնը մշակող ուսուցիչներից էին Հելէն Բէյթս Օմերոնը եւ Դեմետրի Անդրէոն։ Սիրուն Մանգուրեանի առաջին դերերգը Կարմէնն էր (Բիզէի «Կարմէն»), Լոս Անջելեսի ֆիլհարմոնիկի բեմում։ Կարմէնի մարմնաւորումը այնպիսի հռչակ բերեց, որ առաջին կատարումից անմիջապէս յետոյ Հոլիվուդի Էմ Ջի Էմ եւ Քոլոմբիա կինոստուդիաները նրա հետ պայմանագիր կնքեցին, առաջարկելով որպէս ձայնափոխանորդ երգելու կինոաստղերի՝ Ժանէտ Մագդոնալդի, Քատրին Գրէյսի եւ Այրին Դունի փոխարէն։ 1932-ին նա հրաւիրւեց կատարելու Ալիս (Դոնիցետտիի «Լուչիա դի Լամերմուր») Լոս Անջելէսի Գրանդ օպերայում Լա Սկալայի եւ Մետրոպոլիտէնի նշանաւոր երգիչներ Լիլի Պոնզի՝ Լուչիայի դերում, Ֆրանչեսկօ Մերլիի, Ալֆրեդօ Գանդոլֆիի, Լուիս դ՛ Անջելօյի հետ։ Մանգուրեանը շարունակեց իր կատարողական գործունէութիւնը Հոլիվուդ Բոլում, այնպիսի արտիստների հետ ինչպէս՝ Մարիա Ջերիցան, Նովանտան։ Անդամ էր Լոս Անջելեսի եւ Սան Ֆրանսիսկոյի Գրանդ օպերայի եւ Ամերիկեան օպերային ընկերութեան։ Սիրուն Մանգուրեանի արտակարգ ձայնածաւալը՝ երեք ու կէս օկտաւա հնարաւորութիւն էր տալիս կատարել կանացի տարբեր ձայների համար գրւած դերերգեր եւ երգեր։ Որպէս ազգային հեռուստատեսային ընկերութեան մենակատար, Սիրուն Մանգուրեանը նշանաւոր երգիչներ Կլաուդիա Մուցիոյի, Ռիչարդ Բոնելլիի, Մարիօ Ջիամլէի եւ Մոնա Պոլիի հետ, հանդէս եկաւ սոպրանոյի եւ մեցցօ սոպրանոյի գլխաւոր այնպիսի դերերգերով, ինչպէս՝ Աիդա, Բիսկաիա, Ջիովաննա (Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Ռիգոլետտօ»), Կարմէն (Բիզէի «Կարմէն»), Բեպպէ, Լոլա (Մասկանիի «Բարեկամ Ֆրից», «Գեղջկական ասպետութիւն»), եւ այլն։ Սիրուն Մանգուրեանը մենահամերգներով ճամբորդել է ԱՄՆ-ում եւ Միջին Ամերիկայում։ Իր համերգային ծրագրերում նա միշտ ընդգրկել է հայ կոմպոզիտորների գործեր. Կոմիտաս, Եկմալեան, Կարա-Մուրզա։ Սիրուն Մանգուրեանը «Հայ արւեստի ընկերութեան» հիմնադիրներից է։ Բեմը թողնելուց յետոյ նա զբաղւեց նկարչութեամբ ու խեցեգործութեամբ, մասնակցեց բազմաթիւ ցուցահանդէսների մեծ յաջողութեան հասնելով նաեւ այս բնագաւառում։



©1999 Alice Navasargian

Siroon Mangurian



©1999 Alice Navasargian


Siroon
MANGURIAN
Soprano
TOWN HALL
SUNDAY AT 3 P. M.
SEPT. 21, 1947
First New York Recital

**TOWN HALL • SUN. AFT. at 3:00 • SEPT. 21, 1947**

**SIROON**

# MANGURIAN

**SOPRANO**

**ARPAD SANDOR *at the Piano***

## *Program*

| | | |
|---|---|---|
| I | IL Mio Ben Quando Verra | Paisiello |
| | Se Florindo è Fedele | Scarlatti |
| II | Auf dem Wasser zu singen | Schubert |
| | Liebesbotschaft | Schubert |
| | Auflösung | Schubert |
| | Immer leiser wird mein Schlummer | Brahms |
| | Meine Liebe ist grün | Brahms |
| III | Mia Speranza Adorata<br>Concert Aria (Koechel 416) | Mozart |
| | INTERMISSION | |
| IV | My Lady Lo.Fu | Elinor Remich Warren |
| | Nang Ping | Kathleen Lockhart Manning |
| | Like Barley Bending | Mildred Lund Tyson |
| | (Three American Women Composers) | |
| V | Jota | De Falla |
| | Nana | De Falla |
| | El Morenito | Buzzi-Peccia |
| VI | Gantzrevi Dghas | H. Berberian |
| | Hovarek Sarer Jan | Gomidas Vartabed |
| | Renjbari Yerk | Goro Zakarian |
| | Alagiaz-kezi Mernim | Gara-Mourza |
| | Katzek Desek | Gara-Mourza |

Steinway Piano

**Tickets**
$1.20 . . $1.80 . . $2.40 (tax incl.)
Loges seating (6) $21.60 or
$3.60 per seat.
On Sale at Town Hall Box Office

***Concert Management:* WILLIAM L. STEIN, INC.**
**113 WEST 57th STREET NEW YORK 19, N. Y.**

Ազդագիր Ս. Մանգուրեանի մենահամերգի Լոս Անջելէսի «Թաուն Հալ» սրահում 1947



©1999 Alice Navasargian




In 1932 Siroon Mangurian was chosen as one of the most highly acclaimed musical stars, according to the Los Angeles Times Sunday morning newspaper dated October 2-nd 1932
She has shown among the most famous Metropolitan Opera stars of the time Lily Pons (2), Herbert (3) and Edward (6) Janssen.
1932 թւին Սիրուն Մանգուրեանը ճանաչւեց ԱՄՆ-ի կլասիկ երաժշտութեան լաւագոյն երգչուհիներից մէկը։



©1999 Alice Navasargian




LOS ANGELES CONSERVATORY OPERA DEPARTMENT

HERBERT WEISKOPF, *Musical Director* — GLYNN ROSS, *General Manager & Stage Director*

PRESENTS

## "CARMEN"

OPERA IN FOUR ACTS

*Music by* GEORGES BIZET. *Text by* MEILHAC AND HALVEY, *after Prosper Merimee's Romance. Translation by Robert Simon*

### THE CAST

| | | |
|---|---|---|
| CARMEN | | SIROON MANGURIAN |
| DON JOSE | | CONRAD SCHULTZ |
| MICAELA | | YOLA CASSELLE |
| ESCAMILLO, the Toreador | | STANLEY KURTZ |
| ZUNIGA, Captain of Dragoons | | NORMAN BETGE |
| FRASQUITA | Companions of Carmen | DOLORES DAVIS |
| MERCEDES | Companions of Carmen | WANDA WEISKOPF |
| DANCAIRO | Smugglers | PAT FARWELL |
| REMENDADO | Smugglers | ALAN MENDENHALL |
| MORALES, an officer | | ROBERT MADSEN |

An Innkeeper, Guide, Soldiers, Citizens, Boys, Cigarette Girls, Gypsies, Smugglers

*Choreography by* THEODORE KOSLOFF *Settings designed by* E. JAY KRAUSE
Children's Chorus directed by Harland D. Anderson, Lowell School

| | |
|---|---|
| Wardrobe Designed by | GIO SOLIMENE |
| Production Secretary | PAULINE FARRELL |
| Assistant Conductor | CAROLYN TROJANOWSKY |
| Technical Director | CHARLES BOLDIN |
| Settings Painted by | MARVINO DE CHELLIS |
| Property Master | JESÚS ALCAZAR |

TIME AND PLACE: About 1820; Seville, Spain

ACT I: Square of the Cigarette Factory
ACT II: A Tavern in the Suburbs
ACT III: A Rocky Pass in the Mountains
ACT IV: The Square at the Entrance to the Bull Ring

Սիրուն Մանգուրեանը Քարմէնի դերում, Բիզէի «Քարմէն» եւ Մադալենայի դերում Վերդիի Ռիգոլետօ

SATURDAY NIGHT . . . . . . AUGUST 21

THE OPERA ASSOCIATION OF THE GOLDEN WEST

PRESENTS

## CARMEN

Opera by Georges Bizet

ACT II—A Tavern in the Suburbs of Seville.

CAST

| | | |
|---|---|---|
| Carmen, a gypsy cigarette girl | | Siroon Mangurian |
| Don Jose, a brigadier | | Frank Collini |
| Escamillo, a toreador | | Rodolfo Hoyos |
| Zuniga, a captain | | Albert Cranston |
| Remendado | Smugglers | Julian Alexandre |
| Dancairo | Smugglers | Joseph Ganopole |
| Frasquita | Gypsy friends of Carmen | Elizabeth Walberg |
| Mercedes | Gypsy friends of Carmen | Doris Playsted |

*Conductor*
ALDO FRANCHETTI

## FAUST

Opera by Charles Gounod

Garden Scene

| | |
|---|---|
| Marguerite | Margaret Christman |
| Martha, neighbor of Marguerite | Blanche Phillips |
| Siebel, youth devoted to Marguerite | Audrey Dodds |
| Faust, philosopher | David Laughlin |
| Mephistopheles, the evil one | Jerome Hines |

*Conductor*
ERNST GEBERT

## I PAGLIACCI

Opera by Ruggerio Leoncavallo

ACT I— Feast of Assumption at Calabria, near Montalto. Afternoon.

| | |
|---|---|
| Nedda | Lola Bori |
| Tonio | Rodolfo Hoyos |
| Silvio | Elio Lombardi |
| Peppe | Julian Alexandre |
| Canio | Vladimar Rosing |

*Conductor*
ALDO FRANCHETTI

## RIGOLETTO

Opera by Giuseppe Verdi

ACT IV—A Deserted Spot on the Shores of Mincio

| | |
|---|---|
| Gilda | Armandita Chirot |
| Maddalena | Siroon Mangurian |
| Rigoletto | Rodolfo Hoyos |
| Duke of Mantua | Anthony Marlowe |
| Sparafucile | Jerome Hines |

*Conductor*
FULGENZIO GUERRIERI

LADIES OF THE ENSEMBLE

*Sopranos:* Sylvia Bengston, Connie Allen, Elizabeth Devlin, Bette Davis, Hazel La Fevre, Bea Fox, Katherine Nettleship, Dorothy Dornfield, Janice Nack, Marguerite Hindman, Doris Playsted, Nelda Scarcella, Oueta Elland, Elsie Broune, Nellie Porsaci.

*Altos:* Carol Johnston, Terrea Lea, Mary Daniels, Bobbe Rathburn, Sylvia Dayton, Helen Limneous, Rose Cravea, Clara Griggs, Norma McLain, Laura Lyons, Harriette Campbell.

MEN OF THE ENSEMBLE

*Tenors:* Jack Musial, Henry Hardie, Cecil Charles, Kenneth Lee, Samuel Smith, Edward Fadem.

*Baritones:* Arthur Milner, Douglas Meltzer, Ralph A. Glick, Arnet Amos, Martin Jenkins, James Lindsay.

CREDITS

Costumes by Goldstein & Co., San Francisco
Scenery by R. L. Grosh & Sons
Lighting by L. A. Stage Lighting

STAFF FOR OPERA ASSOCIATION OF THE GOLDEN WEST

| | |
|---|---|
| Director of Production | Vladimir Rosing |
| Assistant to Mr. Rosing | Margaret Christman |
| Stage Manager | Michael Campanella |
| Technical Advisor | Flora Norris |
| Wardrobe Mistress | Bessie Winder |
| Master Carpenter | Frank Barnett |
| Master of Properties | J. A. Miller |



©1999 Alice Navasargian

# Arous Aserian
# Արուս Ասրեան
1904- 1987

Actress Arous Aserian was born in Tiflis. She trained under the supervision of Hovsep Takanian at the Drama-Opera Group. Her precocious talent won her the role of Anoush in Dikranian's opera *Anoush*. Arous starred on the Tiflis stage until 1929, earning the highest praise for her work in Shartabshian's musical drama *Khalkhi nokar*.

She married the noted director Vardan Aserian and they moved to Leninakan. Her reputation as an outstanding talent spread quickly. Arous' most famous roles were the following: Xenia in *Begoum*, Nastia in Gorky's *The Lower Depths*, Shoghakat in *The Honorable Beggars*, Louisa in *Rape and Love*, and as Tania in *Tania*.

In 1940, Arous chose Yerevan's Sundoukian Theater for her final performances. Armenian audiences exalted her well-cultured demeanor and personality, her exquisite taste, her mastery of voice, and her acting proficiency in general. Her most critically acclaimed roles were Mirandolina in *The Landlady of the Hotel* and Diana in the comedy *For others crazy, for her intelligent*.

Arous brought innovation and vitality to her characters. Her other numerous memorable roles include: Susan in Shirvanzadeh's *Namous*, Anoush in Baronian's *Brother Baghdasar*, Diana in *The Gardener's Dog*, Ophelia in Shakespeare's *Hamlet*, Chubanova in Gorky's *Yegor Bulychov and others*, Portia in *The Merchant of Venice*, Louisa in *Moliere's Love and Passion*, Mareh in William Saroyan's *My Heart is in the Highlands*, and Margaret in *Kronin's Deacon Brodie*.

The actress also starred in several films, receiving much acclaim for her role as Eustian in *Brave Nazar*. She was "Popular Artist of the Republic of Armenia" in 1951.

ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1951, Արուս Ասրեանը ծնուել է Թիֆլիսում: Բեմական առաջին քայլերը կատարել է Յովսէփ Թականեանի ղեկավարութեամբ գործող դրամա-օպերային խմբում: Առաջին անգամ խաղացել է Անուշի դերը Ա. Տիգրանեանի «Անուշ» օպերայում: Մինչեւ 1929-ը եղել է Թիֆլիսի հայկական թատրոնի առաջատար դերասանուհիներից:

Ժամանակակիցները բարձր են գնահատել Սոնայի դերակատարումը Գ. Շարբաբչեանի «Խալխի նոքար» երաժշտական դրամայում: Ամուսնանալով նշանաւոր բեմադրիչ Վարդան Աճէմեանի հետ՝ Թիֆլիսից եկել է Լենինական: Այստեղ խաղացած լաւագոյն դերերից են՝ Քսենիա (Լաւրենեովի «Բեկում»), Նաստիա (Գորկու «Յատակում»), Շողակաթ (Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ»), Լուիզա (Շիլլերի «Սէր եւ խարդաւանք»), Տանիա (Արբուզովի «Տանիա»):

1940-ին Արուս Ասրեանը հաստատուեց Երեւանի Գ. Սունդուկեանի անուան թատրոնում: Լինելով բարձր կուլտուրայի տէր դերասանուհի, միշտ հանդէս է բերել ճաշակ, հմտութիւն, խօսքի վարպետութիւն եւ բարձրորակ խաղ: Խաղացել է Միրանդոլինա (Գոլդոնիի «Հիւրանոցի տիրուհին»), եւ Դիանա (Լոպէ դէ Վեգայի «Այլոց համար յիմար, իրեն համար խելօք») կատակերգութիւններում:

Արուս Ասրեանի նշանակալի անձնաւորումներից են՝ Սուսան (Շիրվանզադէի «Նամուս»), Անուշ (Պարոնեանի «Պաղտասար աղբար»), Թերեզա (Փափազեանի «Ժայռ»), Օֆելիա, Պորցիա (Շեքսպիրի «Համլետ», «Վենետիկի վաճառականը»), Զուբանովա (Գորկու «Եգոր Բուլըչով եւ ուրիշներ»), Մարէ (Սարոյեանի «Իմ սիրտը լեռներում է»), տատիկ (Դարեանի «Հանրապետութեան նախագահը»), Մարգրիտ (Կրոնինի «Բրոուդիի ամրոցը») եւ այլն: Ասրեանը նկարահանուել է մի շարք հայկական կինոնկարներում, ուշադրութեան է արժանի յատկապէս նրա Ուստիանը «Քաջ Նազար» ում: Արուս Ասրեանը անփոխարինելի էր հայկական կենցաղային դերերում:



©1999 Alice Navasargian

Arous Aserian



As Mare in William Saroyan's My *heart's in the Highlands*
Մարէի դերում «Իմ սիրտը լեռներում է»

©1999 Alice Navasargian



Arous as Margaret in Kronin's *Deacon Brodie*, G. Janibekian as Brodie
Մարգրիտի դերում, «Բրոուդիի ամրոցը»



©1999 Alice Navasargian



Arous as nurse in Shakespeare's *Romeo and Juliet*
Դայեակի դերում «Ռոմէօ եւ Ջուլիետ»



As Zubonova in Gorky's *Yegor Bulychov and others*
Զուբանովաի դերում «Եգոր Բուլըչովը եւ ուրիշները»



As Klava in Bogodin's *The Third Symphony*
Կլաւայի դերում «Երրորդ պաթետիկականը»



As Sato in Araxmanian's *Roses and Blood*
Սաթօի դերում «Վարդեր եւ արիւն»



Arous as Ustian in Demirjian's *Kadj Nazar*, H. Khajanian as Nazar
Ուստիանի դերում «Քաջ Նազար». Համբարձում Խաչանեան Քաջ Նազարի դերում



©1999 Alice Navasargian



As Juliet in Zarian's *Pordzadasht*, Tadevos Sarian as Balabeg
Ջուլիետայի դերում «Փորձադաշտ», Բալաբեկի դերում՝ Թադեւոս Սարեան

# Zarouhi Elmassian
# Զարուհի Էլմասեան
## 1906 - 19--

Zarouhi Elmassian was born in Lynn, Massachusetts. At an early age, her family moved to Fresno, California. She attended Fresno State College and studied Italian, French, and German operas and art songs. Moving to Los Angeles, she entered the Music College at the University of Southern California. Later, Miss Elmassian was accepted by the Los Angeles Grand Opera Company, and during her first season she sang the important and very difficult role of Frasquita in Bizet's *Carmen*. The following year she was given her next important role, the lead as Micaela in Bizet's *Carmen*. She captivated the audience, and they awarded her with thunderous applause.

Zarouhi won scholarships to the Eastern School of Music in Rochester, New York and the Curtis Institute of Music in Philadelphia. The Los Angeles Symphony Orchestra invited her to sing the Soprano solos in Mahler's *Fourth Symphony*, Beethoven's *Ninth Symphony*, and Ernest Bloch's *Israel* with Maestro Rodzinski conducting. She performed Nedda in Leoncavallo's *Pagliacci*, Lola in Mascagni's *Cavalliera Rusticana*, Fedora in Giordano's *Fedora*, Ashel in Halevi's *Israel*, Gilda in Verdi's *Rigoletto*, Narina in Donizetti's *Don Pasquale*, and Despina in Mozart's *Cosi Fan Tutte*. Meanwhile, Zarouhi sang in pictures for Hollywood's major studios, working at Metro-Goldwyn-Mayer RKO. At MGM, she was vocal a stand-in for Jeanette MacDonald for several years.

Zarouhi gave concert tours on the East and West Coasts, singing in oratorios, cantatas, and musical events. She was married to Setrag Vartian, one of the early pioneers of Armenian stage and motion pictures in the United States. The couple coached and cultivated many noted Armenian artists of the time in America.

Երգչուհի՝ քնարական սոպրանօ, Զարուհի Էլմասեանը ծնուել է Մասաչուսէթսի Լինն քաղաքում: Նրանց ընտանիքը շուտով տեղափոխուել է Ֆրեզնօ, որտեղի քոլեջում սովորել է իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն օպերային արիաներ եւ երգեր: Աւարտել է հարաւային Քալիֆորնիայի Իւ Էս Սի համալսարանի երաժշտական բաժինը եւ Բոստոնի «Նիւ Ինգլանդ» կոնսերւատորիան: Ապա ընդունւում է Լոս Անջելէսի «Գրանդ օպերա» ընկերութիւն եւ առաջին թատերաշրջանում կատարում է Ֆրասկիտայի, յաջորդ տարի՝ Միքայելայի դերերգերը (Բիզէի «Կարմէնում»): Մրցութիւնում արժանանում է կրթաթոշակի՝ Նիւ Եօրքի Ռոչեսթերի երաժշտական դպրոցում եւ Ֆիլադելֆիայի Քրթիս ինստիտուտում ուսանելու համար:

Տարբեր դերերգերով հանդէս է եկել Լոս Անջելէսի, Սան Ֆրանսիսկոյի, Բոստոնի, Նիւ Եորքի օպերային խմբերի հետ: Մեներգել է Բեթհովէնի 9-րդ սիմֆոնիայում, Մալերի 4-րդ սիմֆոնիայում, Էռնեստ Բլոխի «Իսրայէլ» երկում: Ելոյթներ է ունեցել Լոս Անջելէսի սիմֆոնիկ նուագախմբի հետ, այնպիսի անուանի դիրիժորների ղեկավարութեամբ, ինչպէս Արթուր Ռոդզինսկին՝ եւ Օտտօ Կլեմպերերը: Երգել է Նորինա (Դոնիցետտիի «Դոն Պասկուալէ»), Դեսպինա (Մոցարտի «Կոսի ֆան դուտէ»՝ «Այդպէս են վարւում բոլորը»), Ջիլդա (Վերդիի «Ռիգոլետտօ»), Նեդդա (Լէոնկաւալլոյի «Պայացներ»), Լոլա ( Մասկանիի «Գեղջկական ասպետութիւն»), Օլգա (Ջիորդանոյի «Ֆեդորա»), Աշըլ (Հալեւիի «Հրեաները»): Հիւսիսային եւ հարավային Ամերիկայում երգել է տարբեր օրատորիաներում, կանտատներում: Նրա ձայնը հնչել է ամերիկեան բազմաթիւ կինոնկարներում: Երկար տարիներ երգել է MGM, RKO, կինոստուդիաներում որպէս ձայնափոխանորդ գլխաւոր արտիստուհիների, որոնցից ամենանշանաւորը Ժանետ Մաք Դոնալդն էր: 1959-ին ամուսնու՝ Միացեալ Նահանգներում հայկական բեմարւեստի եւ կինոարւեստի ռահվիրաներից մէկի, երգիչ եւ դերասան Սեդրակ Վարդեանի հետ եղել է Երեւանում:



©1999 Alice Navasargian

# Zarouhi Elmassian





©1999 Alice Navasargian

# Los Angeles Grand Opera Season

## ...1932...

## PHILHARMONIC AUDITORIUM
## OCTOBER 3 to 8

GAETANO MEROLA, Director-General
GEORGE LESLIE SMITH, Manager
JAMES V. PETRIE, Assistant Manager
ARMANDO AGNINI, Technical Stage Director

**Monday Evening October 3rd at 8:15**

## LA TRAVIATA

*(In Italian)*

Opera in Four Acts by G. Verdi

| | |
|---|---|
| Violetta | Claudia Muzio |
| Flora | Norma Tremaine |
| Annina | Zaruhi Elmassian |
| Alfredo | Mario Chamlee |
| Giorgio Germont | Richard Bonelli |
| Gastone | Franco Lafranconi |
| Il Dottore | Louis D'Angelo |
| Il Barone | Marsden Argall |
| Marchese | Robert Sellon |

CONDUCTOR: GAETANO MEROLA

*Breon and Darrow Ballet*

**Tuesday Evening October 4th at 8:15**

## Lucia di Lammermoor

*(In Italian)*

Opera in Four Acts and Five Scenes by G. Donizetti

| | |
|---|---|
| Lucia | Lily Pons (First Appearance on the Pacific Coast) |
| Alice | Siroon Mangurian |
| Edgardo | Francesco Merli (First Appearance on the Pacific Coast) |
| Lord Henri Ashton | Alfredo Gandolfi |
| Lord Arthur Bucklaw | Franco Lafranconi |
| Raymond | Louis D'Angelo |
| Norman, Captain of the Guard | Edward Fadem |

CONDUCTOR: GAETANO MEROLA



©1999 Alice Navasargian

Angeles Record

YOUR N
With no priva
and no selfish
to serve.

LOS ANGELES, TUESDAY, SEPTEMBER 27, 1932

Published Daily Except Sunday at Record Building, 612 Wall St. Subscription Price, by Mail, $6 a year.

# "FORTE, SIGNORE! FORTE!"

* * * * * *

## (Meaning: "You've Got to Sing Loud to Get Over in Grand Opera")



*Call it what you will—but Maestro Pietro Cimini, conductor of the Los Angeles Grand Opera season, is nevertheless deadly serious as he shows Soprani Zaruhi Elmassian, left, and Siron Mangurian, right, how to get together on their low notes.*



©1999 Alice Navasargian

Actress Clara Shahbazian was born in Tabriz, Iran. In 1918, by edict of the Persian Shah, all foreign nationals had two choices; they could become citizens of Iran, or they could leave the country. Clara Shahbazian's father, Moushegh Shahbazian, a citizen of Georgia, took his family to Tiflis. Clara, who had received her early education at the Armenian School in Tabriz, continuing in the Russian language at the Alexander Lisitsian School in Tiflis. She received her musical education at the Tiflis Conservatory and graduated as a pianist. She married actor Vartan Ghazarian and in 1932 moved to Yerevan. There she studied acting under V. Vartanian at the Hay Bem School. Clara had a unique gift for acting.

The beautiful young Armenian woman, who had precocity for the stage, immediately attracted the attention of seasoned actors and theater lovers. Through their encouragement and her unwavering devotion to the art, she became one of the best talents of the Armenian stage. She played Beatrice in Baronian's *The Servant with Two Masters* and Clara Murtzon as Charles Dickens' *David Copperfield*. She also performed the role of Anahit in Ghazaros Aghayan's *Anahit*, Dajatouhi as Raffi's *Samuel*, Vishinskayia in Ostrovsky's *Lucrative Office*, Lara in *The Innocent Accused*, Lucrezia as Hugo's *Lucrezia Borgia*, and Anfisa Petrovna in *The Frightful Day*.

Clara Shahbazian worked in the Youth Section of the State Theater until the final days of her life.



Clara Shahbazian
Կլարա Շահբազեան
1910 - 1992

Դերասանուհի Կլարա Շահբազեանը ծնել է Թաւրիզում՝ Պարսկաստան։ 1918 թւին պարսից թագաւորի հրամանով օտարահպատակները պիտի ընդունէին իրանահպատակութիւնը այլապէս՝ հեռանային երկրից։ Կլարայի հայրը՝ Մուշեղ Շահբազեանը, լինելով Վրաստանի հպատակ, ընտանիքով վերադառնում է Թիֆլիս։ Կլարան, որ նախնական կրթութիւնը ստացել էր Թաւրիզի հայկական «Արամեան» դպրոցում, ուսումը շարունակում է Թիֆլիսի Ալեքսանդր Լիսիցեանի անւան դպրոցում, ռուսերէն լեզւով։ Երաժշտական ուսումը նա ստանում է Թիֆլիսի երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժնում։ Ամուսնանում է դերասան Վարդան Ղազինեանի հետ, եւ 1932 թւին նրանք փոխադրւում են Հայաստան ու բնակութիւն հաստատում Երեւանում։ Այստեղ դերասանական արւեստ է սովորում դերուսոյց Վափիկ Վարդանեանի մօտ՝ «Հայ բեմ» դպրոցում։ Բեմական ցայտուն ընդունակութեամբ օժտւած գեղեցկադէմ հայուհին անմիջապէս գրաւում է թատերական գործիչների ուշադրութիւնը, քաջալերանքի արժանանում եւ կորովի ու հետեւողական աշխատանքով դառնում բեմական լաւագոյն ուժերից մէկը։ Նրա դերերից են՝ Բէատրիչէ (Պարոնեանի «Երկու տիրոջ ծառայ»), Կլարա Միւրցոն (ըստ Դիկենսի «Դէյւիդ Քափըրֆիլդ»), Անահիտ («Անահիտ» ըստ Ղազարոս Աղայեանի) հեքիաթի, Տաճատուհի («Սամւէլ», ըստ Րաֆֆու վէպի), Լուկրեցիա (Հիւգոյի «Ցեզար Բորջիա» ):

Կլարա Շահբազեանը մինչեւ կեանքի վերջին տարիները գործել է Երեւանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնում։



©1999 Alice Navasargian

Clara Sahbazian



As Vishinskaya in Gorky's *Protective office*
Վիշինսկայայի դերում

©1999 Alice Navasargian

# Yevgineh Khachikian
# Եւգինէ Խաչիկեան
1913 - 1991

Yevgineh Khachikian, opera singer and lyric dramatic soprano, was born in Tiflis. She graduated from the Tiflis Music Conservatory in 1936 under the supervision of the celebrated Mikhaelovskaya. From 1938-1968, she was an outstanding soloist of the Spendiarian State Opera and Palace. She possessed a voice rarely encountered in opera, a voice rich with soft lyricism and dramatic depths. Yevgineh created characters, one more complex than the next and occupies a well-deserved place in the history of Armenian opera and stage.

Her most memorable roles were Natasha in Dargomizshky's *Mermaid*, Jaruslavna in *Borodin's Prince Igor*, Arevik in Stepanian's *Sunrise*, Shushan in Dikranian's *David Beg*, Chu Chu San in Puccini's *Madame Butterfly*, Masha in Nabravnik's *Dubrovsky*, Floria Tosca in *Tosca*, and Tamara in Rubenstein's *Demon*. The talented singer, with great professionalism, mastered the role of Aida, the gem of international opera. Many famous artists proclaimed Yevgineh's Aida with the best performances worldwide.

Yevgineh was also a wonderful performer of tender songs and romances. The Golden Archives of the State Radio houses her numerous recordings, and they remain a source of deep emotion and artistic pleasure for anyone fortunate enough to hear them. Yevgineh taught at the Yerevan Conservatory for many years.

Օպերային երգչուհի, քնարա-դրամատիկական սոպրանօ, ՀՍՍՀ վաստակաւոր արտիստուհի Եւգինէ Խաչիկեանը ծնւել է Թիֆլիսում։ Աւարտել է Թիֆլիսի կոնսերւատորիան 1936 թւին։

1938-1968 թւականներին եղել է Ալ. Սպենդիարեանի անւան օպերայի եւ բալետի թատրոնի առաջատար մեներգչուհիներից։ Եւգինէ Խաչիկեանը օժտւած էր օպերային արւեստում հազւադէպ հանդիպող ձայնով, որը հնչում էր եւ՛ մեղմ քնարականութեամբ, եւ՛ դրամատիկական խորութեամբ։

Կերտելով մէկը միւսից հիւթեղ երաժշտական կերպարներ, Եւգինէ Խաչիկեանն իր արժանաւոր տեղն է գրաւել հայ օպերային թատրոնի պատմութեան մէջ։ Անմոռաց են նրա Նատաշան (Դարգոմիժսկու «Ջրահարսը»), Եարոսլաւնան (Բորոդինի «Իշխան Իգոր»), Արեւիկը (Ստեփանեանի «Լուսաբացին»), Շուշանը (Տիգրանեանի «Դաւիթ Բէկ»), Չիօ Չիօ Սանը, Ֆլորիա Տոսկան (Պուչչինիի «Մադամ բաթըրֆլայ», «Տոսկա»), Մաշան (Նապրաւնիկի «Դուբրովսկի»), Տամարան (Ռուբինշտէյնի «Դեւ»), եւ այլ բեմական լիարժէք կերպարները։ Երգչուհին վարպետութեամբ է մարմնաւորել համաշխարհային օպերային գրականութեան զարդ Աիդայի կերպարը, տալով նրա դրամատիկական աւարտուն դիմանկարը։

Եւգինէ Խաչիկեանը նաեւ գողտրիկ երգերի ու ռոմանսների հիանալի կատարող էր։ Նա երկար տարիներ դասաւանդել է Երեւանի կոնսերւատորիայում։



©1999 Alice Navasargian



Yevgineh as Shoushan in Armen Dikranian's *David Beg*
Շուշանի դերում «Դաւիթ բէկ»

©1999 Alice Navasargian

# Datevig Sazandarian
# Տաթեւիկ Սազանդարեան
## 1916

Datevig Sazandarian, opera and concert singer, was born in Goris. She graduated from the Vocal Dramatic Studio of the Armenian Cultural House in Moscow.

In 1933, she sang with the Concert Symphony of Yerevan. The same year, the Spendiarian State Opera and Palace invited her to perform. In 1960 she was graduated from Yerevan State Conservatory.

Datevig's first roles were as Gayaneh in Spendiarian's *Almast opera*, Olga in Tchaikovsky's *Yevgeny Onegin*, and Zibel in Gounod's *Faust*. In 1939, she achieved critical acclaim for her title role in *Almast*, a performance at the ten-day Armenian Cultural Festival held in Moscow. The young singer astonished everyone with her radiantly unique and delicate mezzo-soprano voice. Such vocal mastery at her tender age is always a rare but pleasant surprise. She also charmed audiences with her dynamic dramatic ability as well. She made important contributions to the development of the National Opera. Critics considered her Almast in Spendiarian's *Almast* and Parandzem in Chukhajian's *Arshag II* as classical, beyond comparison. Her solos as Tamar in Dikranian's *David Beg*, Shushan in Babayev's *The Eagles' Fortress*, Nazeli in Stepanian's *The Heroine*, and Anna in *Sayat-Nova*, were written especially for her.

Datevig's resonant voice, exceptional musicality, and dramatic verve gave an emotional commitment to her roles as Carmen in Bizet's *Carmen*, Amneris in Verdi's *Aida*, Azuchena in *Troubadour*, Dalila in Saint-Saens' *Samson and Dalila*, Jocasta in Stravinsky's *Oedipus Rex*, Lubava in Rimsky-Korsakov's *Sadko*, and Konchakovna in Borodin's *Prince Igor*.

Her repertoire of classical and contemporary songs was vast. It included works of the great Armenian composers, from Gomidas to Spendiarian. And it included compositions of the great composers; Mozart, Schubert, Liszt, Bizet, Grieg, Donizetti, Rubinstein, Tchaikovsky, and Rachmaninoff.

Datevig received the title of "Popular Artist" in 1965. From 1961, she taught at the Conservatory. From 1972-1977, she taught in the Artistic-Theatrical Institute. Datevig is a State Laureate and has visited many nations.

Երգչուհի՝ մեցցո-սոպրանո, Տաթեւիկ Սազանդարեանը ծնուել է Գորիսում։ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի՝ 1965։ Աւարտել է Մոսկւայի հայ գեղարւեստի տանը կից վոկալ դրամատիկական դպրոցը։ 1933-ից կամերային համերգներով հանդէս է եկել Հայաստանի սիմֆոնիկ նուագախմբի հետ եւ նոյն տարում հրաւիրուել է Երեւանի Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոն։ 1960 թւին աւարտել է Երեւանի պետական կոնսերւատորիան։

Տաթեւիկ Սազանդարեանի առաջին դերերգերից են՝ Գայանէ (Սպենդիարեանի «Ալմաստ»), Օլգա (Չայկովսկու «Եւգենի Օնեգին»), Զիբէլ (Գունոյի «Ֆաուստ»), Նրա անունը հռչակւեց 1939 թւին, երբ Մոսկւայում հայ արւեստի տասնօրեակին հանդէս եկաւ Ալմաստի դերերգով, համանուն օպերայում։ Քսաներեքամեայ երգչուհին հիացրեց իր գեղեցիկ, արտասովոր ու փափուկ մեցցո-սոպրանո ձայնով, դրամատիկ դերասանուհու եւ վոկալիստի փայլուն տւեալներով։ Նշանակալի է Տաթեւիկ Սազանդարեանի ներդրումը ազգային օպերային արւեստի զարգացման գործում։ Նա Փառանձեմի (Չուխաճեանի «Արշակ Բ»), Ալմաստի (Սպենդիարեանի «Ալմաստ»), Աննա (Յարութիւնեանի «Սայաթ Նովա») դերերգերի առաջին կատարողն էր։ Իսկ Թամարի (Տիգրանեանի «Դաւիթ բէկ»), Շուշանի (Բաբաեւի «Արծւաբերդ»), Նազելիի (Ստեփանեանի «Հերոսուհին») դերերգերը գրւած են յատկապէս Տաթեւիկ Սազանդարեանի համար։ Նրա դերերգերից են նաեւ՝ Կարմէն (Բիզէի «Կարմէն»), Ամներիս, Ազուչենա (Վերդիի «Աիդա», «Տրուբադուր»), Դալիլա (Սէն-Սանսի «Սամսոն եւ Դալիլա»), Իոկաստա (Ստրաւինսկու «Էդիպ արքայ»), Լիւբաշա (Ռիմսկի-Կորսակովի «Թագաւորի հարսնացուն»), Կոնչակովա (Բորոդինի «Իշխան Իգոր»), Օլգա (Չայկովսկու «Եւգենի Օնեգին»)։

Չափազանց հարուստ է Տաթեւիկ Սազանդարեանի նաեւ սենեկային երգացանկը, ուր տեղ են գտել հայ երգի տարբեր տեսակներ՝ Կոմիտասից ու Սպենդիարեանից մինչեւ ժամանակակից կոմպոզիտորներն ու գուսանները։

Նա 1961 թւականից դասաւանդել է Երեւանի կոնսերւատորիայում, իսկ 1972-77 թւականներին՝ Երեւանի Գեղարւեստա-թատերական ինստիտուտում։

Տաթեւիկ Սազանդարեանը հիւրախաղերով այցելել է աշխարհի բազմաթիւ երկրներ։ Նա բնակւում է Երեւանում։



©1999 Alice Navasargian

Datevig Sazandarian

As Lubava in Rimsky Korsakov's *Sadko*

Լիւբաւայի դերում «Սադկո»



©1999 Alice Navasargian



Datevig as Carmen in Bizet's *Carmen*
Կարմէնի դերում «Կարմէն»



©1999 Alice Navasargian



As Amneris in Verdi's *Aida*
Ամներիսի դերում «Աիդա»



©1999 Alice Navasargian



As Parandzem in Chukhajian's *Arshak II*,
Dikran Yergat as Arshag
Փառանձեմի դերում «Արշակ Բ»

As Almast in Spendiarian's
*Almast* opera,
Ալմաստի դերում «Ալմաստ»



©1999 Alice Navasargian



Legends of Armenia

From left: Academician Victor Hambardzumian, composer Alexandre Haroutunian, actor Vagharsh Vagharshian, poet Avedik Issahakian, Hovhannes Zargarian, opera singer Datevig Sazandarian, painter Mardiros Sarian

Նստած, ձախից՝ Վիկտոր Համբարձումեան, Ալեքսանդր Յարութիւնեան, Վաղարշ Վաղարշեան, Աւետիք Իսահակեան, Յովհաննէս Զարդարեան, Տաթեւիկ Սազանդարեան, Մարտիրոս Սարեան



©1999 Alice Navasargian

# Zarouhi Doloukhanian
# Զարուհի Դոլուխանեան
1918

Zarouhi "Makarian" Doloukhanian, mezzo-soprano, was born in Moscow. She received her early musical education from her singer mother, Yelena Babayan. Subsequently, the well-trained musician graduated from the Igoumnovi Musical School (piano) and the Gnessin's State School (violin) in Moscow. She went to Yerevan with her husband, pianist and Composer Alexander Doloukhanian and joined the Academic Theater of the Spendiarian State Opera. Zarouhi was radiantly beautiful. Her flawless performances and artistic versatility won the plaudits of critics and fans. Her grace, presence, and noble features gave her a regal bearing. Zarouhi's immense talent earned her the most prestigious roles: Olga in Tchaikovsky's *Yevgeny Onegin*, Zibel in Gonoud's *Faust*, Lubava in Rimsky-Korsakov's *Sadko*, Doniashahi in *Tsar's Bride*, Polina in *The Queen of Spades*, Emilia in Verdi's *Otello*, and especially the role of Gayane in Spendiarian's *Almast* opera. In 1944, she went to Moscow and was accepted as a soloist with the All Soviet Radio, and in 1959 she became a soloist in the Moscow Concert Hall. Zarouhi's great command and her two and a half octave voice allowed her to play the most demanding roles, roles that required the highest technical and artistic mastery: Rossina in Rossini's *The Barber of Seville*, *The Neopolitan Tarantella*, and Mozart's *Alleluia*. She also sang with great subtlety and inner dramatic quality the songs and romances of Gomidas, Rachmaninoff, and Tchaikovsky.

In 1965, Zarouhi Doloukhanian earned the title of Popular Artist of the Republic of Armenia, and in 1951, she received the equivalent title from the Soviet Union. In 1966, the beloved singer became a Laureate of the State. Zarouhi taught at the Moscow Conservatory.

Երգչուհի, մեցցօ-սոպրանօ Զարուհի Դոլուխանեանը՝ Մակարեան, ծնել է Մոսկւայում: Երաժշտական նախնական կրթութիւնն ստացել է մօրից՝ երգչուհի Ելենա Բաբայեանից: Ապա աւարտել է Մոսկւայի Իգումնովի անւան երաժշտական դպրոցի դաշնամուրի եւ Գնեսինների անւան երաժշտական ուսումնարանի ջութակի դասարանները: Մասնագիտական բարձրագոյն կրթութիւն նոյնպէս ստացել է Մոսկւայի Գնեսինների անւան մանկավարժական դպրոցում, աշակերտելով նշանաւոր մանկավարժ Բելյաեւա Տարասեւիչին: 1941 թւականին ամուսնու՝ կոմպոզիտոր, դաշնակահար Ալեքսանդր Դոլուխանեանի հետ եկել է Երեւան եւ ընդունել Ալ. Սպենդիարեանի անւան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոն: Իր արտակարգ գեղեցկութեամբ, անթերի կատարումով ու բարձր արւեստով Զարուհի Դոլուխանեանը հմայել է հանդիսատեսին. նազելի շարժումներով, վեհ կեցւածքով, ազնիւ դիմագծերով ու յստակ նայւածքով նա նմանւում էր իսկական իշխանուհու: Դերասանական ու մանաւանդ ձայնական անուրանալի տւեալները հնարաւորութիւն տւեցին տաղանդաշատ երգչուհուն կատարել Օլգա, Պոլինա (Չայկովսկու «Եւգենի Օնեգին» «Պիկովայա դամա»), Զիբել (Գունոյի «Ֆաուստ»), Դունյաշա (Ռիմսկի-Կորսակովի «Թագաւորի հարսնացուն» եւ Պոլինա «Պիկովայա դամա»), Էմիլիա (Վերդիի «Օթելլօ») եւ յատկապէս Գայանէ (Սպենդիարեանի «Ալմաստ») դերերգերով, լաւագոյնս ցուցաբերելով բեմական արւեստում պահանջւող պահւածքը, մաքուր, հնչեղ ու յստակ ձայնը:

1944 թւականին Զարուհի Դոլուխանեանը մեկնում է Մոսկւա եւ ընդունւում համամիութենական ռադիօ որպէս մեներգչուհի: 1949-ին Բուդապեշտում, երգիչների միջազգային մրցոյթում, արժանացել է առաջին մրցանակի, իսկ 1959 թւականից նա Մոսկւայի համերգասրահի մենակատարուհին էր: Զարուհի Դոլուխանեանի քնարական մեցցօ-սոպրանօն իր մեծ ձայնածաւալով՝ երկու եւ կէս օկտաւա, գեղեցիկ տեմբրով հազւագիւտ ձայն էր, որի շնորհիւ էլ երգչուհին կարողանում էր կատարել տեխնիկական ազատութիւն եւ ձայնի յատուկ շարժունակութիւն պահանջող վիրտուոզային գործեր, ինչպէս Ռոզինայի դերերգը (Ռոսսինիի «Սեւիլեան սափրիչը»), «Նէապոլիտանական տարանտելլա»ն եւ Մոցարտի «Ալելուիա»ն: Լայնաշունչ նուրբ մեղեդայնութեամբ եւ ներքին դրամատիզմով էր նա կատարում Տոսկայի, Դալիլայի մեներգները, Կոմիտասի, Չայկովսկու, Ռախմանինովի երգերն ու ռոմանսները: Նրա երգացանկում մեծ տեղ են գրաւում հայ կոմպոզիտորների ստեղծագործութիւնները: Նա հանդէս է եկել աշխարհի բազմաթիւ երկրներում: 1965 թւականին նա արժանացել է ՀՍՍՀ, իսկ 1951-ին՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչումներին: Ժողովրդի սիրելի երգչուհին դառնում է ՍՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր՝ 1951-1966: Զարուհին երկար տարիներ դասաւանդել է Մոսկւայի կոնսերւատորիայում:

Zarouhi Doloukhanian



©1999 Alice Navasargian

# Zarouhi Doloukhanian



As Lisa in Tchaikovsky's Pikovaya *Dama*
Լիզայի դերում «Պիկովայա դամա»



©1999 Alice Navasargian



Mrs. Doloukhanian on stage
Ձ. Դոլուխանեանը բեմի վրայ



©1999 Alice Navasargian

## Maro Ajemian
## Մարո Աճէմեան
1920-1978

Maro Ajemian, internationally known concert pianist, who at the age of six was the youngest musician ever admitted to what is now the Julliard School of Music in New York. She went on to become one of the most prolific recording artists among women instrumentalists. Born in Lausanne, Switzerland, Maro Ajemian began studying with her mother and was reading music before she could read the alphabet. At the age of five, she received a gold medal at a New York City competition for young musicians. Maro made her debut as a solo recitalist at Town Hall in New York in 1940. It was the start of a life-long career of artistic and critical success. In 1942, while still a student of Carl Friedberg at Julliard, Maro introduced the Music of Aram Khachatur ian to the United States with the first performances of his piano concerto, which ultimately brought worldwide recognition to the composer. By 1946, Maro presented new works written for her by American composers, many of whom were unknown but were destined for subsequent international fame. She was the first to introduce Alan Hovhanes' music to concert audiences. In 1948, Maro Ajemian and her younger sister, violinist Anahid Ajemian, joined talents and formed a sonata duo. They toured the United States, Canada, and Europe, though Maro continued to solo periodically. In 1951, the American Composers Alliance honored the Ajemians as the first musicians to receive its Laurel Leaf Award for Distinguished Service to American Music. Her last appearance, in San Francisco, took place nearly a year before her death in 1978.

Մարո Աճէմեանը ծնւել է Լոզանում, Շւեյցարիա։ Երաժշտական կրթութիւնը սկզբում ստացել է մօր մօտ։ Հինգ տարեկանում ոսկէ մեդալի է արժանացել Նիւ Եօրքի մանկական երաժշտական մրցոյթում։ Վեց տարեկանում արդէն «Ջուլիարդ» դպրոցի սանուհիներից էր։ Մարոյի առաջին մենահամերգը կայացաւ Նիւ Եօրքի Թաուն Հոլլում՝ 1940-ին։ 1942-ին երբ տակաւին «Ջուլիարդ»ում աշակերտ էր, Ա.Մ.Ն.-ում ներկայացրեց Արամ Խաչատրեանի երաժշտութիւնը, առաջին անգամ կատարելով նրա դաշնամուրի կոնցերտը, որն ի վերջոյ համաշխարհային հռչակ բերեց կոմպոզիտորին։ 1946-ին Մարո Աճէմեանը ներկայացրեց իր համար ամերիկեան կոմպոզիտորների գրած ստեղծագործութիւններ։ Նրանցից շատերը դեռեւ անյայտ էին, բայց նախասահմանւած՝ միջազգային ճանաչման։ Դաշնակահարուհին առաջինն էր, որ միօրինակ համերգային ծրագրերին նոր հնչողութիւն հաղորդեց Ալան Յովհաննէսի երաժշտութեամբ։ 1948-ին իր կրտսեր քրոջ՝ ջութակահարուհի Անահիտ Աճէմեանի հետ շրջագայեց Միացեալ Նահանգների, Կանադայի, Եւրոպայի քաղաքներում՝ արձանագրելով մեծ յաջողութիւններ։ Նրանց կատարումները ձայնագրւեցին եւ պատրաստւեց մի ալբոմ երաժշտասէրների համար։ 1951-ին ամերիկեան կոմպոզիտորների միութիւնը Մարո Աճէմեանին, որպէս առաջնակարգ երաժիշտներից մէկի, ամերիկեան երաժշտութեան բնագաւառում նշանակալի ծառայութիւնների համար արժանացրեց դափնեկրի պատւի։

## Anahid Ajemian
## Անահիտ Աճէմեան
1924

Violinist Anahid Ajemian was born in New York. While a student of Edouard Dethier at the Julliard Graduate School of Music, she won the Walter W. Naumberg Foundation Award. In the same year, she made her debut at Town Hall and received the Distinguished Achievement Medal from Mademoiselle Magazine as the Young Woman of the Year in music. With her pianist sister, Maro, she performed in Europe, Canada, and the United States. Anahid's repertoire included works written by such noted composers as John Cage, Henry Cowell, Allan Hovaness, Ernst Krenek, Lou Harrison, Wallingford Riegger, and Carlos Surinach among others. Together and separately, the sisters recorded extensively for Columbia, RCA Victor, MGM, and Composers Recording, Inc. They were the first instrumentalists to receive the Laurel Leaf Award of the American Composers Alliance for Distinguished Service to American music. Anahid made her radio debut on the Bell Telephone Hour and has made countless broadcasts and television appearances in the United States and abroad since. She has appeared as soloist under the batons of Dmitry Mitropoulos, Leopold Stokowski, and Izler Solomon, and she has recorded with the latter two as well. In the mid-sixties, Anahid and fellow violinist Matthew Raimondi founded the Composers String Quartet, which quickly earned an international reputation. The group has toured Western Europe, the Soviet Union, Bulgaria, Romania, India, the Middle East, Africa, Australia, and the Far East. Anahid is a member of Columbia University's music faculty and has participated in many international competitions, including the Naumburg Foundation Awards and the Rockefeller Foundation International Music Competition.

Ջութակահարուհի Անահիտ Աճէմեանը ծնւել է Նիւ Եօրքում։ Նախնական երաժշտական կրթութիւնն ստացել է «Ջուլիարդ» երաժշտական դպրոցում, պրոֆեսոր Էդուարդ Դեթիերի դասարանում։

Մասնակցելով Վալթեր Վ. Նաումբուրգ հիմնադրամի կազմակերպած մրցոյթին, շահել է առաջին մրցանակը։ Նիւ Եորքի Դովն Հալլ-ի մրցոյթում արժանացել է «Մադեմուազէլ Մագազին»-ի մեդալին, որպէս տարւայ առաջին երիտասարդուհի։ Քրոջ՝ դաշնակահարուհի Մարոյի հետ համերգներով հանդէս է եկել Միացեալ Նահանգների, Կանադայի, Եւրոպայի մի շարք քաղաքներում՝ կատարելով Ալան Յովհաննէսի, Ջոն Քէյջի, Հենրի Քաուէլլի, Էռնեստ Քրենեքի, Լօ Հերիսոնի եւ այլ կոմպոզիտորների ստեղծագործութիւններից։ Որպէս մենակատար նա փայլել է սիմֆոնիկ նւագախմբերի հետ, այնպիսի հռչակաւոր դիրիժորների ղեկավարութեամբ, ինչպէս՝ Լէոպոլդ Ստոկովսկի, Դիմիտրի Միտրոպոլոս, Իզլեր Սոլոմոն։ 60-ականների կէսերին Մաթիու Ռէյմոնդիի հետ կազմակերպեց լարային կւարտետ, հիւրախաղերի մեկնելով Արեւմտեան Եւրոպա, Խորհրդային Միութիւն, Ռումինիա, Բուլղարիա, Հնդկաստան, Չինաստան, Միջին Արեւելք։

Անահիտ Աճէմեանը Քոլումբիայի համալսարանի երաժշտական բաժնի անդամ է, եղել է իրաւարար միջազգային երաժշտական բազմաթիւ մրցոյթներում, համագործակցում է Նաումբուրկ Ֆաունդէյշըն Ավարդս-ի եւ Ռաքֆելլեր հիմնադրամի հետ։



©1999 Alice Navasargian

Maro Ajemian
Anahid Ajemian



# Lilie Chookasian
# Լիլի Չուքասզեան
1920

Contralto Lilie Chookasian was born in Chicago, and her exceptional vocal talent was apparent at an early age. Lilie studied voice under the supervision of Maestro Philip Manueli.

She was making her debut with the New York City Metropolitan Opera, in the early 1960's. After several persuasive offers from producers, Chookasian ventured to Little Rock, Arkansas, to perform in an opera. An audition with the Metropolitan Opera came next, immediately followed by a two-year contract. Since then she has performed with many major orchestras in The United States, and in many prestigious European Festivals. She subsequently performed in Chicago and New York. The Italian Apoletto Festival invited Lilie to sing the difficult roles of Herodias in Strauss' *Salome* and as Clarissa in Prokofiev's *The Love for Three Oranges*.

The New York Metropolitan Opera offered her the role of Giaconda in Ponchielli's *La Giaconda*.

In 1962, she became the star of that famous opera house and gave thirty performances. Her partial but impressive list includes: Norma in Bellini's *Norma*, Amneris in Verdi's *Aida*, Azucena in *Il Trovatore*, Eboli in *Don Carlos*, Magdelone in Nielson's *Masquerade*, Bersi in Giordano's Andrea *Chenier*, and Delilah in Saint-Saëns' *Samson and Delilah*.

Lilie's voice is particularly well suited to Bach, and she sang his Passions, Messiah, Oratorios, and Cantatas. She also performed Handel's Messiah, Mozart's Requiem, and Verdi's Requiem. Lilie has also sung the works of Bergolezi, Rossini, Wagner, Brahms and Beethoven.

She has worked with the best orchestras and conductors in the world including Von Karajan and Rubinstein.

In 1967, Lilie visited Yerevan, performing a full and rich repertoire that included Parantzem in *Arshag II* and Amneris in *Aida*.

In 1978, Chookasian was a guest at the White House, where she performed several Armenian songs-the first ever sung there.

Երգչուհի՝ կոնտրալտօ, Լիլի Չուքասզեանը ծնել է Չիկագոյում: Ձայնը մշակել է մայեստրո Ֆիլիպ Մանուէլիի մօտ: Մինչեւ 1959-ը բացառիկ առիթներով նա ելոյթներ է ունենում տարբեր բեմերում: 1959-ին հրաւիրւում է երաժշտութիւն դասաւանդելու Չիկագոյի Նորթ Վեստերն համալսարանում: Այդ նոյն թւականին Լիլի Չուքասզեանը մեծ յաջողութեամբ հանդէս եկաւ Արքանզասի «Լիթըլ Ռաք» օպերայի բեմի վրայ, իսկ այնուհետեւ՝ Չիկագոյի եւ Նիւ Եորքի բեմերում: Իտալիայի Ապոլետտոյի փառատօնը հրաւիրում է նրան կատարելու Հերովդիադայի (Ռ. Շտրաուսի «Սալոմէ»), ինչպէս եւ Կլարիսայի դերերգերը (Պրոկոֆիեւի «Սէրը դէպի երեք նարինջները») օպերաներում: Վերադառնալով Նիւ Եօրք, երգչուհին հրաւիրւում է Մետրոպոլիտէն օպերա, Լա Սիեկայի դերերգով (Պոնկիելլիի «Ջոկոնդա»): 1962 թից Լիլի Չուքասզեանը դառնում է Նիւ Եորքի Մետրոպոլիտէն օպերայի աստղերից մէկը, հանդէս գալով 30 գլխաւոր դերերգերով, որոնցից են՝ Ադալջիզա, Թերեզա (Բելլինիի «Նորմա», «Սոմնամբուլա»), Ամներիս, Ազուչենա, Էբոլի, Ուլրիկա (Վերդիի «Աիդա», «Տրուբադուր», «Դոն Կարլոս», «Դիմակահանդէս-պարահանդէս»), Մադելոն (Ջորդանոյի «Անդրէ Շենիէ»), Տատիանա (Չայկովսկու «Եւգենի Օնեգին»), Դալիլա (Սէն-Սանսի «Սամսոն եւ Դալիլա»), Մահարանի (Մենոտտիի «Վերջին սաւեջը»), Մագդելոն (Նիլսենի «Դիմակահանդէս»): Նրա ձայնը չափազանց յարմար էր Բախի համար. երգել է կոնտրալտոյի մասերը նրա պասիոններում, մեսսայում, օրատորիայում եւ կանտատներում, ինչպէս եւ Հենդէլի մեսսայում, Մոցարտի եւ Վերդիի ռէքվիեմներում: Կատարել է Պերգոլեզիի, Ռոսսինիի, Բեթհովէնի, Վագների, Բրամսի, Սէն-Սանսի ստեղծագործութիւններ: Աշխատել է աշխարհի լաւագոյն նւագախմբերի եւ մեծ խմբավարների հետ, ինչպէս՝ հռչակաւոր Հերբերտ Ֆոն Կարայեանն ու Արթուր Ռուբինշտէյնը: 1967 թւին նա այցելում է Հայաստան. Երեւանում հանդէս է գալիս ճոխ ու հարուստ երգացանկով՝ Փառանձեմ («Արշակ Բ») եւ Ամներիս («Աիդա») դերերգերով: **1978**-ին հրաւիրւել է Վաշինգտոն եւ ելոյթ է ունեցել «Սպիտակ Տանը», երգել է հայերէն:1981-ին արժանացել է ՀՍՍՀ մշակոյթի նախարարութեան Պետրոս Ադամեանի անւան մրցանակին:



©1999 Alice Navasargian

Lilie Chookasian



©1999 Alice Navasargian

# Gohar Galajian
# Գոհար Գալաչեան

1923

Gohar Galajian, opera star and mezzo-soprano, was born in Yerevan. She graduated from the Yerevan Conservatory in 1952 and began her career with the Spendiarian State Opera and Palace. From 1956-1960, Gohar performed with that great theater, playing many special roles: Konchakovna in Borodin's *Prince Igor*, Ludmila in Smetana's *The Bartered Bride*, Olga in Tchaikovsky's *Yevgeny Onegin* and The Governess in *The Queen of Spades*.

She returned to Yerevan in 1960 where she portrayed some of the most famous roles in opera: Almast in Spendiarian's *Almast* opera, Parandzem in Chukhajian's *Arshag II*, and Anna in Harutunian's *Sayat-Nova*.

During 1956-1960, in Moscow she played a series of Russian and Western classical opeaic heroines: Lubava in Rimsky-Korsakov's *Sadko*, The Countess in *Pikovaya Dama*, Amneris in Verdi's *Aida*, Madalena in *Verdi's Rigoletto*, Carmen in *Carmen*, Azuchenan in *The Troubadour*, Ebolyn in *Don Carlos*, Jocasta in Stravinsky's *Oedipus*, and Ulrica in Verdi's *A Masked Ball*.

Gohar was a peerless concert singer. Her vast repertoire included the master works of Beethoven, Bach, Handel, and Schubert, which she sang under the supervision of Melik Pasha, Gauki, and Zanderlin.

Gohar convincingly proved that the roles written for mezzo-sopranos had found their finest performer. In the concluding concert of the Armenian Art Festival of Moscow, she sang Aram Khatchaturian's cantata Panegyric of Happiness. It was a role written for mezzo-soprano and one that the great composer himself requested her to sing.

She became Popular Artist of the  of Armenia in 1967. Gohar Galajian has traveled widely throughout her career, being generous to share her talents with enthusiastic fans. She currently teaches at the Yerevan State Conservatory.

Երգչուհի, մեցցօ-սոպրանօ, ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի՝ 1967, Գոհար Գալաչեանը ծնուել է Երեւանում: 1952 թփն աւարտել է Երեւանի կոնսերւատորիան եւ աշխատանքի է անցել Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնում: Ունենալով կատարողական բարձր մակարդակ, երգչուհին մեծ յաջողութեամբ մարմնաւորել է Լիւդմիլա (Սմետանայի «Վաճառուած հարսնացուն»), Օլգա, Կոմսուհի (Չայկովսկու «Եւգենի Օնեգին», «Պիկովայա դամա»):

1956 թ. Մոսկւայում հայ արւեստի երկրորդ տասնօրեակի եզրափակիչ համերգում նա երգել է Արամ Խաչատուրեանի «Ներբող խնդութեան» կանտատայի մեցցօ-սոպրանօյի համար գրուած բաժինը, հեղինակի ցանկութեամբ: 1956-60թթ. Գոհար Գալաչեանը աշխատել է Մոսկւայի մեծ թատրոնում. նրա դերերգերից են՝ Ամներիս, Ուլրիկա, Մադալենա (Վերդիի «Աիդա», «Դիմակահանդէս-պարահանդէս», «Ռիգոլետտօ»), Կոնչակովա (Բորոդինի «Իշխան Իգոր»), եւ այլն: 1960 թփն վերադարձել է Երեւան: Ազգային օպերային հերոսուհիներից բացի, ինչպէս՝ Փառանձեմ (Չուխաճեանի «Արշակ Բ»), Ալմաստ (Սպենդիարեանի «Ալմաստ»), Սոնա (Հ. Ստեփանեանի «Լուսաբացին»), Աննա (Ա. Յարութիւնեանի «Սայաթ Նովա»): Գոհար Գալաչեանն ստեղծել է նաեւ ռուսական ու արեւմտաեւրոպական դասական օպերաների հերոսուհիների մի շարք, որոնցից են՝ Լիւբաշա (Ռիմսկի Կորսակովի «Թագաւորի հարսնացուն»), Ազուչենա, Էբոլի (Վերդիի «Տրուբադուր», «Դոն Կարլոս»), Ադալջիզա (Բելլինիի «Նորմա»), Կարմէն (Բիզէի «Կարմէն»), Իոկաստա (Ստրաւինսկու «Էդիպ արքայ»):

Գոհար Գալաչեանի համերգային երգացանկում տեղ են գտել Բախի, Հենդէլի, Բեթհովէնի, Շուբերտի ստեղծագործութիւնները, որոնք նա կատարել է սիմֆոնիկ նուագախմբերի հետ Ա. Մելիք Փաշայեւի, Գաուկի, Զանդերլինգի ղեկավարութեամբ:

Համերգներով շրջագայել է աշխարհի բազմաթիւ երկրներում: 1979-ից դասաւանդում է Երեւանի կոնսերւատորիայում:



©1999 Alice Navasargian

Gohar Galajian



Galajian as Amneris in Verdi's *Aida*
Ամներիսի դերում «Աիդա»

©1999 Alice Navasargian

Gohar Galajian



As Parandzem in Dikran Chukhajian's *Arshak II*, Gegham Gregorian as Dirit
Փառանձեմի դերում «Արշակ Բ»

©1999 Alice Navasargian



As Gertrude in Herkel's *Bang-Ban*
Գերտրուդի դերում «Բանկ-Բան»



©1999 Alice Navasargian

# Kay Armen
# Քէյ Արմէն

1923

Kay Armen born Armenuhi Manoogian. Her opulent voice captivated millions of Americans during radio's halcyon days and the first days of television.

She began her singing career in 1943 as a featured vocalist at WSM Radio in Nashville. After moving to New York, she soon became one of the most popular entertainers in town, appearing on a mixture of radio shows every day of the week, including the *Danny Thomas Show*, the *Carnation Milk Show*, and ABC's popular *Stop the Music*, a coast to coast hit at the time. She even had her own radio program, The Kay Armen Show, which blended pop music and interviews with such personalities as Edward R. Murrow, Andrew Baruch, and Frank Sinatra. Kay later went into movies, where she played Vic Damone's mother in one of MGM's major musicals, *Hit the Deck*. The movie, which also starred Jane Powell, Debbie Reynolds, Tony Martin, Vic Damone, and Russ Tamblyn, was included in a segment of That's Entertainment I.

She inherited her natural singing ability from her father, Robert Manoogian, who was the soloist in the chorus church of Kharpet . Kay Armen has perfect pitch and an uncanny memory. She once learned the score for an hour-long cantata in a few hours after hearing it played only twice on the piano. She considers her musical skills to be "a God-given gift."

Երգչուհի, կինոդերասանուհի։ Քէյ Արմէնը, բուն անունով՝ Արմենուհի Գայանէ Մանուկեան, ծնուել է Չիկագոյում։ Մանուկ հասակում երգել է Չիկագոյի հայկական եկեղեցում։ Առաջին ելոյթը 1935-ին էր։ Իր ձայնական կարողութիւնը ժառանգել է խարբերդցի հօրից՝ Ռոբերտ Մանուկեանից, որը մենակատար էր եկեղեցական երգչախմբում։ Երբ դեռ լաւ չէր կարողանում կարդալ նոտաները, մէկ ժամանոց կանտատա երգեց նւագը ընդամէնը երկու անգամ դաշնամուրով լսելուց յետոյ։ Հիանալի լսողութիւն եւ յիշողութին ունի Քէյ Արմէնը։ 1940-ին հռչակուել է ԱՄՆ-Ի Հիւսիս-Արեւելքում որպէս առաջնակարգ երգչուհի։ Մրցանակներ է շահել տարբեր փառատօներում։ Որպէս մեներգչուհի 1943-ից ելոյթներ է ունեցել Նաշվիլի WSM ռադիօկայանից։ Նիւ Եօրք տեղափոխուելուց յետոյ նոյնպէս դարձաւ սիրուած երգչուհիներից եւ զւարճանքի խոշորագոյն աստղ, նա մասնակցում էր ռադիօ շոուների, ինչպէս՝ Դանի Թոմաս շոուն, Քարնէյշն Միլք շոուն, եւ ABC-ի «Կանգ առ երաժշտութիւն» շոուն, որ հաղորդւում էր ԱՄՆ-ի բոլոր քաղաքներում եւ այդ օրերի ամենասիրուած ծրագիրն էր։ Շուտով նրան թոյլատրուեց ռադիօում ունենալ իր ծրագիրը՝ «Քէյ Արմէն Շոու» անուամբ, որում հաղորդւում էր դասական երաժշտութիւն, հարցազրոյցներ ծրագրի մասնակից յայտնի դէմքերի հետ, ինչպէս՝ Էդուարդ Ռ. Մուրրօ, Էնդրիւ Բարուխ եւ Ֆրենկ Սինատրա։ 1961-ին Քէյ Արմէնը պայմանագիր կնքեց «Մետրօ-Գոլդուին-Մայերի» հետ եւ նկարահանուեց **16** կինոմիւզիքըլներում՝ «Տախտակեայ ջունգլիներ», «Արի թուխտ պարենք», «Հայրութիւն», «Զւարճանք», «Ցնցող տախտակամած», եւ այլն։ Վերջինում խաղացել է Վիք Դէմոնի մօր դերը։ Խաղընկերներն էին նշանաւոր երգչուհիներ Ջեյն Փաուըլ, Դեբի Ռէյնոլդսը, Թոնի Մարտինը, Վիք Դամոնը եւ Ռաս Թամբլինը։ Մենահամերգներով շրջագայել է Ամերիկայում։



©1999 Alice Navasargian

Kay Armen



©1999 Alice Navasargian

# Gohar Gasparian
# Գոհար Գասպարեան
## 1924

Gohar Gasparian, opera star and lyric soprano, was born in Cairo, Egypt where she studied at the local Armenian school. From 1936-1939, she studied at the French College, receiving her basic specialized education from Italian professors at the Elis Feldman and Vincenzio Kardo musical schools. In 1944, Gohar was a soloist for the Egyptian State Radio, where she also sang Armenian songs. In 1948, she repatriated to Armenia. A year later, she joined the Yerevan State Opera and Palace. Her first role was as Lakme in Delibe's *Lakme*, and she profoundly impressed her audiences. Gohar's unusual vocal range, from the lower "sol" octave to the to the "la" in the third octave, made it possible for her to perform the most demanding operas; Karine in Chukhajian's *Karine*, Lucia in Rossini's *Lucia di Lammermoor*, Marfan in Rimsky-Korsakov's *The Tsar's Bride*, Eboli in Verdi's *Don Carlos*, Norina in Bellini-s *Norma*, Eboli in *Don Carlos*, Norina in Donizetti's *Don Pasquale*, Juliet in Gounod's *Romeo and Juliet*, Rosina in Rossini's *The Barber of Seville*, Marguerite in *Faust*, and Violetta in Verdi's *La Traviata*. Her flawless technique, voice flexibility, tonal range, and the lightness of her vocal passages astonished listeners. She soon became an idol to opera lovers throughout the country.

Though trained in Egypt, Gohar sang with equal competence in Armenian operas. Her Anoush in Dikranian's *Anoush*, Shushan in *David Beg*, Olympia in Chukhajian's *Arshag II*, Karine in *Karine*, and Gohar in Stepanian's *The Heroine* are milestones in the history of Armenian theater. She also sang Beethoven, Bach, Handel, Gluki, and Yekmalian, Gomidas, and Gara Murza.

Gohar lives in Yerevan and teaches at the Yerevan State Conservatory, where she is the director of the vocal division. Many of her students have gone on to become laureates at international competitions and have graced stages around the world.

She has received many honors and even has a planet named after her. Gohar was the recipient of the Mesrop Mashtots medal. In 1956, she became Popular Artist of Armenia , 1984 the State Artist of Soviet Union. Gohar was the State Laureate of Armenia and the Hero of Labor and Honorary Citizen of Yerevan in 1984.

Օպերային երգչուհի՝ քնարական-կոլորատուրային սոպրանօ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի՝ 1951 եւ 1956, ՀՍՍՀ՝ 1965, պետական մրցանակների դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս՝ 1984, Երեւանի պատուաւոր քաղաքացի՝ 1984։ Գոհար Գասպարեանը ծնւել է Կահիրէում։ Սովորել է ծննդավայրի հայկական վարժարանում, ապա՝ 1936-39 թւերին՝ ֆրանսիական քոլեջում։ Մասնագիտական հիմնաւոր կրթութիւնն ստացել է իտալացի պրոֆեսորներ Էլիս Ֆէլդմանի եւ Վինչենցօ Կարտոյի երաժշտական դպրոցներում։ 1948-ին ներգաղթել է Հայաստան, ուր մէկ տարի անց հրաւիրւել է Երեւանի Սպենդիարեանի անւան օպերայի եւ բալետի թատրոն՝ աշխատելու։ Նրա առաջին դերը եղել է Լակմէն՝ Դելիբի «Լակմէ» օպերայում, որով ցնցող տպաւորութիւն է թողել հասարակութեան վրայ։ Գոհար Գասպարեանի անսովոր ձայնածաւալը՝ փոքր օկտաւայի սոլ հնչիւնից մինչեւ երրորդ օկտաւայի լա հնչիւնը նկատի ունենալով, յատուկ նրա համար բեմադրել են՝ Ռոսսինիի «Լուչիա դի Լամերմուր»՝ Լուչիա, «Սեւիլեան սափրիչը»՝ Ռոզինա, Դոնիցետտիի «Դոն Պասկուալէն»՝ Նորինա, Բելլինիի, «Նորման»՝ Նորմա, Ռիմսկի-Կորսակովի «Թագաւորի Հարսնացուն»՝ Մարֆա, Գունոյի «Ֆաուստը»՝ Մարգարիտ, Վերդիի «Տրաւիատան»՝ Վիոլետտա, եւ մեծանուն երգչուհին անբասիր տեխնիկայով, ձայնի ճկունութեամբ, երանգների ճոխութեամբ ու անցումների թեթեւութեամբ հիացրել է ունկնդիրներին՝ դառնալով նրանց կուռքը։ Գոհար Գասպարեանը հաւասար վարպետութեամբ հանդէս է եկել նաեւ հայկական օպերաներում։ Նրա Անուշը, Շուշանը (Տիգրանեանի «Անուշ», «Դաւիթ բէկ»), Օլիմպիան, Կարինէն (Չուխաճեանի «Արշակ Բ.», «Կարինէ»), Գոհարը (Հ. Ստեփանեանի «Հերոսուհին»), հայ երաժշտական թատրոնի պատմութեան մէջ կմնան որպէս կատարողական արուեստի եզակի կոթողներ։ Դասական օպերաների փայլուն այդ աստղը, նոյն վիրտուոզութեամբ, հնչեցրել է նաեւ Բախի, Հենդէլի, Գլիւկի, Մոցարտի, Բեթհովէնի, Շտրաուսի, Գրիգի, Չայկովսկու, Ռախմանինովի, Սայաթ Նովայի, Եկմալեանի, Կոմիտասի եւ այլ կոմպոզիտորների երգեր։ Այժմ նա ապրում է Երեւանում, դասաւանդում Երեւանի Կոմիտասի անւան կոնսերւատորիայում, ուր երգեցողութեան բաժնի վարիչ է։ Նրա սաներից շատերը միջազգային մրցոյթների դափնեկիրներ են եւ զարդարում են բազմաթիւ երկրների բեմերը։

Գոհար Գասպարեանի անունով է կոչւում մոլորակներից մէկը։



©1999 Alice Navasargian



As Violetta in Verdi's *La Traviata*
Վիոլետտաի դերում «Տրափիատա»

Gohar Gasparian

©1999 Alice Navasargian



As Shoushan in Dikranian's *David Beg*, Feodor Ohanian as Shahoumian
Շուշանի դերում «Դավիթ բէկ»



©1999 Alice Navasargian

# Gohar Gasparian



As Anoush in Dikranian's *Anoush* opera, Avak Petrosian as Saro
Անուշի դերում «Անուշ»

©1999 Alice Navasargian



Gohar as Karine in Chukhajian's *Karine*
Կարինէի դերում «Կարինէ»



As Anoush in Dikranian's *Anoush*
Անուշի դերում «Անուշ»



As Rossina in Rossini's *Barber of Seville*
Ռոզինայի դերում «Սեւիլեան սափրիչը»



As Lakme in Delibe's *Lakme*
Լակմէի դերում «Լակմէ»

©1999 Alice Navasargian

Gohar Gasparian



As Norma in Bellini's *Norma*
Նորմայի դերում «Նորմա»

©1999 Alice Navasargian



The choral conductor
George Minasian welcomes
G. Gasparian on the stage of
Abadan theatre in Iran

Երգչախմբի ղեկավար
Ժոռա Մինասեանը
շնորհաւորում է
Գ. Գասպարեանին,
Աբադան, Իրան

©1999 Alice Navasargian



The opera singer and the poet: Gohar Gasparian and Avedik Isahakian
Գոհար Գասպարեանը եւ Աւետիք Իսահակեանը

# Kathy Berberian
# Քէթի Բերբերեան
1925 - 1983

Singer, Musician, and composer Kathy Berberian was born in Steelborough, Massachusetts. She received her advanced education in piano, singing, and dancing in her local area. She settled in Milan, Italy in 1949 and perfected her singing ability under the direction of Georgina Del Vico.

She married Italian composer Luciano Berio and became a master of modern singing, performing many of her husband's works. Her artistic individuality was performed under the direction of the noted director Peter Brook.

Kathy Berberian has performed in many operatic roles, Monteverdi, Massenet, Bizet, and Debussy are her favorite composers. She was also a great interpreter of Armenian music, especially the works of Gomidas, Spendiarian, Alemshah, and Ghazarosian.

Because of her ability to interpret modern vocal works and because of her virtuosity, Stravinsky, Boasettin, Cage, Mion and other composers have written works especially for her. Kathy has won awards at the Festivals in Rome, Venice, Palermo, Warsaw, Amsterdam, Lisbon, Kent and other cities.

Kathy Berberian has written songs and ballads. She created a school of ballet in her own modern style. Kathy has written many scholarly articles on music and has taught at Vancouver University, Toronto, Cologne, and Milan conservatories, and in the Rhine "Collonaire" Musical Academy.

Երգչուհի, երաժշտագէտ, կոմպոզիտոր Քէթի Բերբերեանը ծնուել է Մասաչուսէթսի Սթելբորօ քաղաքում։ Դաշնամուրի, երգարուեստի, պարարուեստի մասնատր կրթութիւն է ստացել ծննդավայրում։ 1949-ին մեկնել է Իտալիա, հաստատուել Միլանում։ Երգարուեստը կատարելագործել է Ջորջինա Դէլ Վիգոյի մօտ։ Ամուսնանալով իտալացի կոմպոզիտոր Լուչիանօ Բերիոյի հետ՝ հմտանում է արդիական երգարուեստում, բազմիցս կատարում ամուսնու երգերը։ Նրա արտիստական անհատականութիւնը ձեւաւորւում է ականաւոր բեմադրիչ Փիթըր Բրուքի ղեկավարութեամբ։ Քէթի Բերբերեանը հանդէս է գալիս բազմաթիւ օպերային դերերգերով։ Նախընտրած հեղինակներն էին՝ Մոնտեւերդին, Մասնէն, Բիզէն, Դեբիւսին։ Նա նաեւ հայ երգի խոշոր մեկնաբան էր։ Կատարել է Կոմիտաս, Սպենդիարեան, Ալեմշահ, Ղազարոսեան։

Արդիական երգարուեստի երկերի բացառիկ մեկնաբանական ձիրքը, կատարողական գերագոյն վիրտուոզութիւնը նկատի առնելով՝ յատկապէս նրա համար երգեր են գրել Ստրավինսկին, Բուսետտին, Քէյջը, Միյոն եւ ուրիշներ։ Մրցանակներ է շահել Հռոմի, Վենետիկի, Պալերմոյի, Վարշաւայի, Ամստերդամի, Լիսսաբոնի, Գենտի եւ այլ քաղաքների փառատօներում։

Քէթի Բերբերեանը գրել է երգեր, բալլադներ։ Հիմնել է իր ոճի բալետի դպրոց։ Հեղինակ է երաժշտագիտական յօդուածների։ Դասաւանդել է Վանկուվերի համալսարանում, Թորոնթոյի, Քեօլնի, Միլանի կոնսերւատորիաներում, «Կոլոներ» հռենոսեան երաժշտական ակադեմիայում։



©1999 Alice Navasargian

Kathy Berberian



©1999 Alice Navasargian

# Arlene Frances
# Արլին Ֆրանսիս
## 1926

Arlene Frances is one of America's most versatile actresses, a star of film, radio, and television. She was the "queen of the airways" from 1950-1970. Born in Boston, she was the only daughter of the famous New York photographer Aram Kazanjian. At the age of seven, Arlene moved to New York where she received her primary education at New York's Mount St. Vincent Academy. She graduated from Manhattan's Finch College and, against her father's wishes, trained at the Theater Guild's Acting School.

During the 1950's, Arlene appeared daily on NBC's popular game show, What's My Line? The network quickly recognized her wit and charm and selected her to host its extravaganza, Home, from 1953-1957).

Her first great success on the stage was in the comedy *Dough Girls*. Arlene also had major roles in *Tchin-Tchin*, *Beekman Place*, and *Mrs. Dolly*. She played opposite Joseph Cotton in the film Once More With Feeling, and in 1966 she starred in Tyron Guthrie's famous play *Dinner at Eight*.

From 1960 to 1970, she hosted The Arlene Frances' Show, which appeared on NBC Emphasis and NBC Monitor. At the invitation of legendary film director Billy Wilder, she played a leading role in *One, Two, Three*, filmed in Munich and Berlin. Her co-stars were Jimmy Cagney and Horst Bucholz. Her last film was Universal's *The Thrill of it All*, directed by Ross Hunter and starring Eddie Andrews and Doris Day.

Arlene is also a talented writer. She authored That Certain Something, The Magic of Charm, and My Cookbook. In 1946, she married stage director Martin Goeble. Critics have called Arlene Frances' "One of the great actresses of all time in the United States."

Ամերիկեան արուեստի աշխարհում ամենաբարձր յաջողութեան հասած արուեստագիտուհիներից մէկն է Արլին Ֆրանսիսը (Գազանճեան)։ Անվիճելի եւ անմրցելի մի տաղանդ, որը 1950-1970 թւականներին իշխել է ամերիկեան կեանքում՝ լինելով ռադիոյի, հեռուստատեսութեան, կինոյի թագուհի։

Արլին Ֆրանսիսը ծնւել է Բոստոնում։ Միակ դուստրն է Նիւ Եօրքի նշանաւոր լուսանկարիչ Արամ Գազանճեանի։ Եօթ տարեկանում ընտանիքով տեղափոխւել է Նիւ Եորք, ուր նախնական կրթութիւնը ստացել է «Մոնթ Սէնթ Վինսենթ ակադեմիայում», ապա «Մանհաթըն-Ֆինչ» քոլեջում։ Թատերական ուսումը ստացել է տեղի «CILT» թատրոնի թատերական վարժարանում։

Հակառակ իր հօր ցանկութեան՝ նա սկսեց գործել որպէս դերասանուհի։ 1950-ից ի վեր, ամէն օր ժամը 11-12 ը երեւում էր NBC հեռուստակայանի «Իմ ուղեգիծը» յայտագրում։ Իր առաջին մեծ յաջողութիւնը թատրոնում եղաւ՝ «Փափկասուն աղջիկներ» կատակերգութիւնը։ «Նորից զգացումներով» կինոֆիլմում խաղացել է յայտնի դերասան Ջոզէֆ Քաթընի հետ։ Բրադվէյում խաղացել է «Չին-Չին», «Բիքման փլէյս», «Միսըզ Դալի» ներկայացումներում, գլխաւոր դերերում։ 1966-ին գլխաւոր դերակատարն էր մեծանուն բեմադրիչ Թայրոն Գոթիէի բեմադրած՝ «Կընթրենք 8-ին» պիեսում։ 1960-1970 թւականներին ունէր իր յայտնի շոուն NBC կայանից՝ «Արլին Ֆրանսիս շոու» անունով եւ նոյնը՝ ABC կայանից, որը ցուցադրւում էր ԱՄՆ-ի բոլոր քաղաքներում։

Ամերիկայի մեծանուն կինոարտադրիչ Բիլի Վայլդերի հրաւէրով, ստացել է գլխաւոր դերը «Մէկ, երկու, երեք» ժապաւէնում, որը պատրաստւեց Միւնխենում եւ Բեռլինում։ Խաղընկերներն էին՝ դերասաններ Ջիմի Քագնին եւ Հորստ Բուխհոլդզը։ Իր վերջին խաղարկութիւնը եղաւ Իւնիվերսալ Ստուդիոյի ընկերութեան «Ամէն ինչ ոգեւորիչ է» ֆիլմում, որ բեմադրեց Ռասս Հանթըրը, մասնակցութեամբ Էդի Անդրուզի եւ Դորիս Դէյի։

Արլին Ֆրանսիսը նաեւ տաղանդաւոր գրող է. գրել է «Միանգամայն վստահ», «Հմայքի կախարդանքը», եւ «Իմ խոհանոցը» գրքերը։



©1999 Alice Navasargian

Arlene Frances



©1999 Alice Navasargian

# Medaxia Simonian

# Մետաքսեա Սիմոնեան

1926 - 1987

Medaxia Simonian was born in Ashkhabad. She graduated from the Yerevan Artistic-Theatrical Institute in 1944. Shortly after, the prestigious Gabriel Sundoukian State Theater invited her to apply her craft, an offer she readily accepted.

Medaxia was still a student when she gained fame for her outstanding performance in the film *Anahit*. Her Armanoush in *These Stars are Ours*, earned her a state medal in 1950, but she became even more famous by playing Nina in Lermontov's *Masquerade*. Following the immortal footsteps of Arous Voskanian, she became an icon in Armenia. She had it all— ability, charm, and beauty.

Medaxia could play the dramatic or the lyrical with equal assurance, and she held no special preference as long as she could act on stage or in film. She became famous for the wide variety of her demanding roles, successfully performing national, Russian, and Western European works.

Her stage performances include: Shura in Gorky's *Yegor Bulychov and Others*, Nastasia Philipovna in Dostoyevsky's *Idiot*, Susan in Shirvanzadeh's *For Honor*, Shushanik in *Chaos*, Nvart in Nayiri Zarian's *Ara the Handsome*, Anoush in Baronian's *Brother Baghdasar*, Desdemona in Shakespeare's *Otello*, Clodelta in *King Lear*, Judith in Gutzkov's *Uriel Acosta*, Martha in Edward Albee's *Who's Afraid of Virginia Woolf?*, and Nancy in Kronin's *Deacon Brodie*. Medaxia earned an international award for her role as Mila in Yavorov's *Vitoshe's Valley*.

The talented actress appeared in several films: *Anahit, The Girl of the Ararat Valley, The Waters are Rising, Mkhitar Sparapet, and Sayat-Nova*, produced by the Hye-Film Armenian Movie Studio.

Medaxia was also an accomplished reciter, and she frequently performed in public. She later became the Director of the Department of Theatrical Expression at the Theater School.

In Medaxia Simonian, Armenian theater and film had a multi-faceted actress. Unfortunately, her early death cut short her career, and her fans lamented their grievous loss. She became the Popular Artist of Armenia in 1981.

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի՝ 1981, Մետաքսեա Սիմոնեանը ծնուել է Աշխաբադում: Աւարտել է Երեւանի գեղարւեստա-թատերական ինստիտուտը 1944 թւին եւ անմիջապէս հրաւիրուել աշխատելու Երեւանի Գաբրիէլ Սունդուկեանի անուան պետական թատրոնում: Դեռ եւս ուսանողուհի էր, երբ հռչակւեց «Անահիտ» կինոնկարի հերոսուհու փայլուն իր դերակատարումով: Արմանուշի կերպաւորումը՝ «Այս աստղերը մերն են», նրան բերեց ՍՍՀՄ պետական մրցանակ 1950:

Մետաքսեա Սիմոնեանը յայտնի դարձաւ մանաւանդ Նինայի դերով Լերմոնտովի «Դիմակահանդէս» պիեսում: Վահրամ Փափազեանի դիպուկ բնութագրմամբ նա «բնութեան պարգեւ» էր: Լինելով դրամատիկական-քնարական շնչի դերասանուհի, չունենալով մասնաւոր նախասիրութիւն, նա հասաւ խաղացանկային լայն ընդգրկման, յաջողութեամբ հանդէս գալով եւ՛ ազգային, եւ՛ ռուսական, եւ՛ արեւմտաեւրոպական հեղինակների գործերում. նրա յաջող դերակատարումներից են՝ Շուրա (Գորկու «Եգոր Բուլըչովը եւ ուրիշները»), Նաստասիա Ֆիլիպովնա («Ապուշը» ըստ Դոստոյեւսկու վէպի), Սուսան, Շուշանիկ (Շիրվանզադէի «Նամուս», «Քաոս»), Նուարդ (Նայիրի Զարեանի «Արա Գեղեցիկ»), Անոյշ (Պարոնեանի «Պաղտասար աղբար»), Դեզդեմոնա, Կորդելիա (Շեքսպիրի «Օթելլօ», «Լիր արքայ»), Կատրին (Սարդոյի եւ Մորոյի «Մադամ Սանժէն», Յուդիթ (Գուցկովի «Ուրիէլ Ակոստա»), Մարթա (Օլբիի «Ո՞վ է վախենում Վիրջինիա Վուլֆից»), Նանսի (Կրոնինի «Բրոուդիի ամրոցը»), Միլա (Պ. Եաւորովի «Վիտոշի փէշերին»):

Տաղանդաւոր դերասանուհին նկարահանուել է «Հայֆիլմ» կինոստուդիայի մի շարք ֆիլմերում, ինչպէս՝ «Անահիտ», «Արարատեան դաշտի աղջիկը», «Ջրերը բարձրանում են», «Մխիթար Սպարապետ», «Սայաթ Նովա»:

Մետաքսեա Սիմոնեանը օժտուած էր նաեւ ասմունքողի բարձր ձիրքով. նա յաճախ հանդէս էր գալիս ասմունքով: Վարում էր Երեւանի Գեղարւեստա-թատերական ինստիտուտի բեմական խօսքի ամբիոնը:

Ցաւօք, սակայն, հանդիսատեսը վաղաժամ զրկւեց նրա խաղը դիտելու գեղարւեստական հաճոյքից:



©1999 Alice Navasargian

Medaxia Simonian



©1999 Alice Navasargian



As Nancy in Kronin's *Deacon Brodie*, G. Chelebian as Mett
Նանսիի դերում «Բրոուդիի ամրոցը». Մետի դերում Գ. Չելեպեան



©1999 Alice Navasargian

Medaxia Simonian

©1999 Alice Navasargian



As Anoush in Baronian's *Brother Baghdasar*, Kh. Nazarian as Kipar
Անոյշի դերում «Պաղտասար աղբար». Քիպարի դերում՝ Խ. Նազարեան

# Lucine Amara
# Լուսին Ամարա
1927

Famous opera superstar, American soprano Lucine Amara was born in Hartford, Massachusetts. Her musical abilities were evident from an early age. She sang in the Armenian Church choir. Lucine trained with the famous voice teacher Stella Eisner and continued her studies at the Santa Barbara Conservatory. She received her advanced musical training at the San Francisco Conservatory, graduating as a violinist and pianist. Lucine won first prize at the All-American Atwater-Kent Competition, in which 1,500 singers participated. That prize became the golden key that unlocked the future. She went on a two-year European concert tour joined the Metropolitan Opera when she returned. Lucine Amara's first performance at the Met was in Mozart's *Magic Flute*. The young singer's velvet-smooth voice captivated the astute New York audience. She heaped success upon success, and her reputation quickly spread. She played the main roles in more than twenty operas: Euridice in Gluck's *Orfeo and Euridice*, Mimi in Puccini's *La Bohème*, Floria Tosca in *Tosca*, Helmwige in Wagner's *The Valkyrie*, Antonia in Offenbach's *The Tales of Hoffmann*, Tatiana in Tchaikovsky's *Yevgeny Onegin*, Aida in Verdi's *Aida*, Micaela and Freccita in Bizet's *Carmen*, to name but a few.

In 1957, The Metropolitan honored Lucine by selecting her to open their season in Tchaikovsky's *Yevgeny Onegin*. She opened for the Met the following year in Verdi's *Aida*.

Lucine has performed worldwide; Canada, Puerto Rico, Sweden, England, Australia, Germany, and Italy. She enjoyed success and high praise at each stop. In 1962, America's greatest artists performed at the grand opening of New York's Lincoln Art Center. Lucine Amara, Lilie Chookasian, and Ara Berberian were among the invited guests, the honor of a lifetime. In 1965, Lucine Amara visited Armenia, which realized her life-long dream. She received an exceptionally warm reception from her compatriots, saying:

*I have never seen anything like this in my whole life. What a wonderful people we are.*

Leaving Yerevan, Lucine visited other cities of the former Soviet Union; Tiflis, Moscow, and St. Petersburg. She thrilled audiences everywhere with her delicate, poetic performances.

Paul Jackson, the author of "History of the Metropolitan Opera" says: Lucine Amara is one of those American singers, whose foremost achievement has turned her into one of the Metropolitan Opera's unique stars. her last performance was in 1992. Her operatic performance list is vast. She has been one of the best classic sopranos of the past fifty years, has performed many roles, contributing great fame to the Metropolitan Opera. Only very few sopranos were able to compete with her in her Mozart's performances.

Her voice was compared with the world's famous sopranos such as Abanes, D' Los Angelos, Redberg and Stratassi.

Մետրոպոլիտէն օպերայի երգչուհի՝ սոպրանօ, Լուսին Ամարան՝ Արմաղանեան, ծնւել է Քէնեթիքէթ նահանգի Հարդֆորդ Քաղաքում։ Երաժշտական կրթութիւնն ստացել է Սան Ֆրանսիսկոյի երաժշտական դպրոցում։ Ձայնը մշակել է պրոֆեսոր Ստելլա Էյզներ Էմիսի մօտ։ 1948-ին համաամերիկեան մի մրցոյթում Աթւաթըր-Քենթ, որին մասնակցում էին 1500 երգիչներ, Ամարան շահում է առաջին մրցանակը։ Երգչուհուն երկու տարով ուղարկում են Եւրոպայի գլխաւոր քաղաքները՝ համերգային շրջագայութեան, որից վերադառնում է մեծամեծ յաջողութիւններով։ Այնուհետեւ նրա առաջ բացւում են Մետրոպոլիտէն օպերայի դռները. Լուսինը առաջին անգամ երգում է Պամինա (Մոցարտի «Կախարդական սրինգ»)։ Նա հանդէս է եկել երկու տասնեակից աւելի օպերային գլխաւոր դերերում. Էւրիդիկա (Գլիւկի «Օրֆէյ եւ Էւրիդիկա»), Ֆլորիա, Տոսկա, Միմի, Չիօ-Չիօ Սան (Պուչչինիի «Տոսկա», «Բոհեմա», «Մադամ Բաթըրֆլայ»), Տատիանա (Չայկովսկու «Եւգենի Օնեգին»), Աիդա (Վերդիի «Աիդա»), Միքայէլա եւ Ֆրաչիտա (Բիզէի «Կարմէն»), Մարգարիտ (Գունոյի «Ֆաուստ»), Նեդդա (Լէոնկաւալոյի «Պայացներ»), Էլւիրա (Մոցարտի «Դոն Ժուան»), Անտոնիա (Օֆենբախի «Հոֆմանի հեքիաթները»), Էլեկտրա (Շտրաուսի «Էլեկտրա»), Լիյու (Պուչչինիի «Տուրանդոտ»), Հելմիգ (Վագների «Վալքիւր») եւ այլն։ Երգել է սոպրանօյի երգամասեր՝ Վերդիի «Ռեքվիեմ»ում եւ Բեթհովէնի իններորդ սիմֆոնիայում։ 1965-ին Լուսին Ամարան այցելեց Հայաստան, որով իրականացաւ տարիների իր երազանքն ու բաղձանքը։ Երեւանում Ալ. Սպենդիարեանի անւան օպերայի եւ բալետի թատրոնում հանդէս եկաւ Աիդայի դերերգով եւ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում մենահամերգով ու բացառիկ ընդունելութեան արժանացաւ իր հայրենակիցների կողմից։

*«Ոչ մէկ տեղ կեանքումս այսպիսի խոր ապրում չեմ ունեցել, ինչ սքանչելի ժողովուրդ ենք»*,- ասել է նա։ Երեւանից յետոյ Լուսին Ամարան եղաւ նաեւ Թիֆլիսում, Մոսկւայում եւ Լենինգրադում։ Կոմիտասի ծննդեան 100-ամեակին կատարել է Կոմիտասի ստեղծագործութիւններից։

Փոլ Ջաքսոնը «Մետրոպոլիտէն օպերայի պատմութիւն» գրքի մէջ գրել է. *«Լուսին Ամարան ամերիկեան այն երգչուհիներից է, որի երկարատեւ գործունէութիւնը նրան դարձրել է Մետրոպոլիտէն օպերայի իւրայատուկ աստղերից մէկը։ Նրա վերջին ելոյթը 1992-ին էր։ Մեծ է Լուսինի օպերային դերակատարումների ցանկը։ Անցեալ յիսուն տարում նա եղել է կլասիկ սոպրանօ լաւագոյն երգչուհիներից մէկը, կատարել է բազում բարդ դերերգեր, Մետրոպոլիտէնին բերելով մեծ հռչակ։ Միայն մի քանի սոպրանօներ կարողացան մրցել երգչուհու հետ Մոցարտի օպերաներում»։*

Լուսին Ամարային համեմատել են համաշխարհային հռչակաւոր սոպրանօներ Ալբանէսի, Դ՛ Լոս Անջելէսի, Ռետբերգի եւ Ստրատասի հետ։



©1999 Alice Navasargian

Lucine Amara




As Cio-Cio San in Puccini's *Madame Butterfly*
Չիո-Չիո Սան, Պուչչինիի «Մադամ Բաթըրֆլայ»

# Lucine Amara



Lucineh as Floria Tosca in Puccini's *Tosca*
Ֆլորիա Տոսկաի դերում Պուչչինիի «Տոսկա»



As Fiordiligi in Mozart's *Cosi Fan Tutte*
Ֆիորդիլիգիի դերում Մոցարտի «Կոսի Ֆան Տուտէ»



As Desdemona in Verdi's *Otello*
Դեզդեմոնաի դերում Վերտիի «Օթելլո»



As Frascita in Bizet's *Carmen*
Ֆրաչիտաի դերում Բիզէի «Կարմէն»



©1999 Alice Navasargian



As Pamina in Mozart's *Magic Flute*
Պամինայի դերում Մոցարտի «Կախարդական սրինգ»



As Donna Elvira in Verdi's *Don Giovanni*
Դոննա Էլվիրա, Վերդիի «Դոն Ժուան»



As Turandot in Puccini's *Turandot*
Տուրանդոտի դերում Պուչչինի «Տուրանդոտ»



As Nedda in Leoncavallo's *Pagliacci*
Նեդդա, Լէոնկաւալոյի «Պայացներ»



©1999 Alice Navasargian